

# 88-ԱՄՅԱ ՔԸՐՔՈՐՅԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՕԳՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

## «Լինսի» հիմնադրամը ևս 60 մլն դոլար է տրամադրում Հայաստանին, 1988-ից ի վեր օգնության գումարն անցնում է 250 մլն-ից

Նախորդ դարասկզբի հայ մեծանուն բարերար Ալեքսանդր Մանթաշյանը ժամանակի ունևոր հայերին հորդորում էր. «Մի մերժեք ձեր պարտքերն առ հայրենիք»: Քըրք Քըրքոբյանը ոչ միայն Մանթաշյանցի խոսքերի հավատարիմ հետևորդն է, այլև բարերարություն անելով երբեք չի ձգտել արժանանալ ավելորդ գովասանքների, գովազդվել, կամ հարցազրույցներ տալով պատմել իր բարեգործության մասին, միջամտել Հայաստանի ներքին քաղաքականությանը, փող տալ ու կամք թելադրել, հրապարակավ երբեք չի արտահայտվել հայ ժողովրդի նկատմամբ իր զգացմունքների մասին:

Հայ ժողովրդի պատմության ամենածանր շրջաններում մեծախարուստ հայերը օգնության ձեռք են մեկնել իրենց հայրենակիցներին: Ալեքսանդր Մանթաշյանց, Հարություն Պեգճյան, Պողոս Նուբար, Ալեք Մանուկյան, Գալուստ Գյուլբենկյան... Սակայն Քըրքոբյանը հայրենասեր բարերարների պատվավոր շարքում հատուկ տեղ ունի: Հայաստանի, հայ ժողովրդի պատմության այս շրջանում չկա որևէ այլ անհատ, որի ներդրումը մեր կյանքում այդքան նշանակալի է արդյունավետ լինի, ինչպիսին Քըրքոբյանի և նրա «Լինսի» հիմնադրամին է:

Առաջին անգամ Հայաստանում հասարակությունն անսովոր Քըրքոբյան ազգանունը լսեց աղետալի երկրաշարժի ժամանակ 1988-ի դեկտեմբերին: Այդ և հետագա 17 տարիներին նա է վճարել «Միացյալ հայկական հիմնադրամի» Հայաստան մարդասիրական օգնություն տեղափոխած շուրջ 140 օդանավերի վարձակալության գումարները, որոնք անցնում են 10 միլիոն դոլարը: 1992-1993 թթ. պատերազմի մութ ու ցուրտ տարիներին «Ձմեռ» ծրագրով Քըրքոբյանը տրամադրեց 14 միլիոն դոլար: 1996 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնը կնքացրեց նրա հանգանակությունը ընդամենը 6,3 միլիոն:

Վերջերս «Լինսի» հիմնադրամը տարածել է հաղորդագրություն, ըստ որի Հայաստանում նոր ծրագրերի համար Քըրքոբյանը 60 միլիոն դոլար է հատկացնելու: «Աշխատանքներն սկսվելու են բոլոր անհրաժեշտ վավերացմաններն ստանալուց և Հայաստանի կառավարության և «Լինսի» հիմնադրամի միջև համաձայնագրերը կնքելուց հետո: Ծրագրերն իրականացնելու է Հայաստանի կառավարությունը՝ «Լինսի» հիմնադրամի աջակցությամբ: «Լինսի» հիմնադրամի ֆինանսավորումն ուղղվելու է դպրոցների խիստ անհրաժեշտ վերակառուցմանը, Երևանի փողոցների բարելավմանը, Հայաստանի ճանապարհների նորոգմանը: Դպրոցների վերակառուցման շնորհիվ հիմնովին բարելավվելու են ուսման պայմանները Հայաստանի հազարավոր աշակերտների համար, որոնց դպրոցների շենքերը տա-



րիներ ի վեր անմխիթար վիճակում են: Իսկ փողոցների և ճանապարհների վերանորոգումը կապահովի մարդկանց և բեռների նորմալ փոխադրությունը Հայաստանի տարածքում, - սավուն է հաղորդագրությունում: Նոր ծրագրերը հաջորդելու են «Լինսի» հիմնադրամի 150 միլիոն դոլարի հաջողությամբ իրականացված ենթակառուցային աշխատանքներին, որի շրջանակներում կառուցվել և վերանորոգվել են ավելի քան 435 կմ ճանապարհներ Հայաստանի ողջ տարածքում, ինչպես նաև հինգ կամուրջ և երկու թունել, բարեկարգվել են Երևանի 17 կենտրոնական փողոցները և Հանրապետության հրապարակը: Աղետի գոտում վերանորոգվել և կառուցվել են 3674 բնակարան, վերանորոգվել են Հայաստանի 34 մշակութային հաստատությունները: Առավել, «Լինսի» հիմնադրամը 20 միլիոն դոլարի վարկեր է հատկացրել Հայաստանում փոքր ու միջին ձեռներեցության զարգացման համար»:

1988 թ. ի վեր Քըրքոբյանի օգնությունը Հայաստանին անցնում է 250 միլիոնից: Անշուշտ, նաև այս աջակցության շնորհիվ է Հայաստանին հաջողվել հաղթահարել երկրի սոցիալ-տնտեսական դժվարությունները: Մնում է հուսալ, որ «Լինսի» տրամադրած միջոցներին Հայաստանում խնամքով կվերաբերվեն, չհնարարական աշխատանքները կարվեն հոգածությամբ, իսկ ճանապարհաշինությունը «ասֆալտ փռել» չի հասկացվի: Հայկական իշխանու-

թյունները մեր մեծ հայրենակից Քըրք Քըրքոբյանի օժանդակության կարիքը կունենան դեռ երկար տարիներ, հետևաբար, գոնե այս գիտակցությունը նրանց պետք է մղի ազնվության:

Ակնհայտորեն Քըրքոբյանի փող վաստակելու և հայրենիքին օժանդակելու եռանդը չի մարում: Բուրբուրված վերջերս նա ութի կանգնեցրեց «Ջեներալ մոտորս» հսկային: Ըստ Ֆորբսի ցուցակի, այս տարի Քըրքոբյանն աշխարհի հարուստների ցանկում 41-րդն է 8.9 միլիարդ կարողությամբ, մինչդեռ անցած տարի 600 միլիարդատերերի ցուցակում նա 65-րդ տեղում էր: Մի քանի շաբաթ առաջ Քըրքոբյանը նշեց ծննդյան 88-ամյակը:

«88 տարեկանում նա շարունակում է գրագ զալ ապագայի վրա» ծավալուն հողավածով լրագրող Դեյվիդ Սթրեյթֆելդը «Ֆայնենշլ թայմս»-ում ուրվագծեց հայ միլիարդատիրոջ անցած ուղին: «Նա խաղամուլ է ծնված օրվանից: Ունի փողի արժեքի հատուկ հոտառություն: Գործարքներ անել է նրան երկարակյաց դարձնում: Քըրքոբյանը ծնվել է Ֆրեզոյում: Մեկ դար առաջ հայրը Հայաստանից Կալիֆոռնիա է մեկնել: Նա մեծությամբ մեջ ապրող չէ, սակայն սիրում է հանդարտ, խաղաղ կյանք: Քչախոս է, նույնիսկ նկարներում նրան հեշտ է ճանաչել: Նրա բերանը փակ է: Նրա քչախոսությունը կարող է հետևանք լինել նրա թերի կրթության. ավարտել է ընդամենը 8-րդ դասարանը: Մյուս պատճառը ժամանակի պակասն է: Նա ժամանակ չունի խոսելու, պատմելու, վերհիշելու: Բայց շատ լավ մարզավիճակում է: Թեմիս է խաղում, մարզահրապարակում նրան 68 տարեկանից ավելի չես տա: Քույրը՝ Ռոզը, 94 տարեկան է և նույնպես շատ լավ վիճակում», գրել է Դեյվիդ Սթրեյթֆելդը՝ ավելացնելով. «Քըրքի հայրը՝ Ահարոնը, ձեռնարկատեր էր, որի բախտն այնքան էլ չի բերել ժամանակին՝ տնտեսական ճգնաժամի տարիներին: «Երեք ամիսը մեկ նա ստիպված էր փոխել բնակարանը, որովհետև չէր կարողանում վարձը վճարել», հիշում է Ռոզ Քըրքոբյանը: Նրա նշանաբաններից մեկը հետևյալն է. «Քո ունեցած ոչ մի բանին այնքան շատ մի կապվիր, որովհետև կարող եմ խլել քեզանից»: Երկրորդը. «Քո ունեցած ամեն ինչը միանգամից գրավ մի դիր, որովհետև կորցնելու դեպքում ոչինչ չես ունենալու հաջորդ անգամ գրավ դնելու»:

**Թաթուլ ՀԱԿՈՐՅԱՆ**

### ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԸ ԱՄՆ-Ի 4-ՐԴ ՄԵԾԱՀԱՐՈՒՄՆ Է

Քըրք Քըրքոբյանը «սատար է կանգնել, ըստ էության, հիվանդ «Ջեներալ մոտորսին» և հերթական անգամ չի սխալվել», գրել է բրիտանական «Օբսերվերը» վերջերս հերթական անգամ անդրադարձնալով մեր հայրենակցի ֆենոմենին:

Ըստ «Օբսերվերի» այժմ Քըրքոբյանն ունի 9 միլարդ դոլար և ԱՄՆ-ի 4-րդ մեծա-

# ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՄ

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՐ

Բոլոր առողջ ժողովուրդների համար, լինեն նրանք «մեծ թե փոքր ածու», որպես ազգային բարձրագույն արժեք արձանագրվում է Մայրենի լեզուն՝ իր ամրակայող բրգաձև ամբողջ կառուցով: Եվ այն ամենևին չի խաչվում մարդկային բարձրագույն արժեքին՝ Ազատությանը: Հակառակը՝ միայն Ազատության արժեքը կրող անձինք կարող են զնահատել Մայրենին, միայն Մայրենիի հարգը գիտակցողները կարող են արժեվորել, պահպանել, իսկ հարկ եղած դեպքում՝ անմնացորդ պայքարել Ազատության համար: Մնացյալը կեղծ է, փարիսեցիություն, եթե իբր ընդունում են մեկը և մյուսի հանդեպ վերապահումներ ունեն:

Ազատության գինն իմացող անհատներն ու ժողովուրդներն իրենց արժեքային համակարգում պարտադիր սահմանում ու պահպանում են նաև Արժանապատվություն արժեքը: Մոտ մեկ և կես դար առաջ մեր պատմության ընթացքի ու հասարակական գիտակցության վրա ամենամեծ ազդեցությունն ունեցած Րաֆֆին դառնությանը համեմատում էր իր ժամանակի հային և անտիկ հույնին՝ ասելով, թե հույները, նախանձախնդիր իրենց արժանապատվությանը, մի Հեղինեի համար Տրոյական պատերազմ մղեցին, մինչդեռ հայերը լուռ ու մունջ հանդուրժում են քրդերի անպատվությունը:

Երիցս ճիշտ էր Րաֆֆին. արժանապատվության մեր գիտակցումը, այդ արժեքի մեր պահանջը, չգիտեմ թե պատմության որ պահից, գլխիվայր շրջված է, և այսօր էլ՝ այն շտկելու փոխարեն խորացնում ենք, կարծես թե դարձյալ պետություն չունենք, կարծես թե դարձյալ օտարն է խորշակի պես սուրում մեր երկրում:

Մեզ համար արժանապատվության դրսևորում է այն, որ կարող ենք ՕՐԵՆԶ խախտել, լինի դա պետական օրենք թե հազարամյակներով նվիրագործված մարդկային համակեցության կանոն: Եթե հազար, հարյուր կամ հիսուս տարի առաջ խախտում էինք օրենքը, դրա համար ունեինք «կուռ» պատճառաբանություն՝ պետք է օտարինք քանդել, մաշել: Պայքարելու փոխարեն զբաղված էինք վնասելով ու այդպես էլ չհասկացանք, որ օտարին վնասելու մեր պրակտիկան դարձավ մեր բնույթն ու էությունը, այլապես ինչո՞վ կարելի է բացատրել, որ թեև այսօր ունենք մեր պետությունը, սակայն պետությունից ու միմյանցից գողանալը, խաբելը մեր պարտքն ենք համարում:

«Արժանապատիվ» հայը հայիոյուն է թուրքին, բայց երբ սկսում է գործել արժեքային քառսի արդյունք՝ բացառապես ստանդեսային առաջնորդումը՝ աչք է փակում, որ տասնյակ հազարավոր հայեր են այս ընթացքում հոսել Թուրքիա և ամենաստորին ու ամենամանրամասնապատիվ զբաղմունքով են տարված: Հայիոյուն մեր «արժանապատիվ» օլիգարխիկները Թուրքիայից են ներմուծում այն, ինչը պարտավոր են Հայաստանում ստեղծել, ծախում ու փակում են գործարանները՝ մրցակցային դաշտը թողնելով իրենց թուլաբաժին նետած թուրքին, և Հուլայի այդ երեսուն արծաթով վաստակած իրենց իշխանությունն օգտագործում մի քանի վայրկյան ավելին կուտակելու: «Արժանապատվորեն» չենք հարցնում Ստամբուլի մեր Պատրիարքարանին, թե այս տարիներին հայ մայրերից քանի-քանի հազար երեխա է ծնվել, ու ինչ է լինելու անփաստաթուղթ, կրթության ու արժանապատիվ կենցաղավարման տարրական հնարավորություններից զրկված մանուկների ճակատագիրը: Մինչդեռ արժանապատվության դրսևորում ենք համարում հանգուցյալների վշտարքներ վերաթաղելը՝ մոռացած ողջերին, մոռացած վտանգված ապագան:

Արժանապատվություն է ընկալվում այն, որ կարելի է ուրանալ կոմունիստական անցյալն ու ոտքից զուլխ ցեղվել, ուրանալ ցեղունն ու «կառուցել» լիբերալ Հայաստան, ուրանալ լիբերալությունն ու ֆեոդալի մասն լլկել սեփական քաղաքացուն, աթեիստից վերածվել քրիստոնյա-դեմոկրատի, օրը մեջ կուսակցություն ու գույն փոխել. մինչդեռ սա կապ չունի արժանապատվության հետ, սա ասիական քստմենլի «բաշարելն» է՝ սեփական մակաբուծությունը թաքցնելու, հանցագործի պատժից խուսա-

փելու համար: Արժանապատվություն է ընկալվում այն, որ իմ մտավորական եղբայրները հորինել են ջալամային մի կարգախոս, թե մտավորականը կուսակցական չի կարող լինել, ուստի պատասխանատու էլ չէ երկրի խայտառակ վիճակի համար. Թունանյանից ու Իսահակյանից, Տերյանից ու Չարենցից, Աղբալյանից ու Ահարոնյանից ավելին չլինեն... Սա տվորական դասալքություն է, սեփական կոչման դավաճանություն:

Արդյո՞ք արժանապատվություն է այն, որ կանգնած 1990-ականների Գերագույն-գլխավոր հրամանատարի հաղթանակի պաշարի վրա՝ այսօր վախենում ենք պաշտպանել ինքներս մեր պատիվը՝ Հայրենիքը, ու ճիշտ 150 տարի առաջվա նման ուզում ենք հավերժորեն ծիկրակել ռուսի թիկունքից ու լիաբերան հայիոյել թուրքին՝ միևնույն ժամանակ չխորշելով Անթալիայում հեզորեն ժամանակ անցկացնելուց. երևի միայն հայիոյելու և տրուճալու իրավունքի պահանջատերն ենք:

Չէխերը ժամանակին գրեթե առանց դիմադրության նացիստներին հանձնեցին իրենց երկիրը, իսկ կառավարությունը տեղափոխվեց Լոնդոն: Բայց երբ Պրահայի գերմանացի քաղաքապետը հենց այնպես, կատակի համար մի քանի րոպեով իր գլխին դրեց Կառլ 4-րդի թագը, չէխերը չնեղեցին, քանի որ վիրավորել էին իրենց արժանապատվությունը: Մի քանի ամիս անց գերմանացին կյանքով հատուցեց: Այսինքն պատերազմը տանուլ է տրված միայն այն ժամանակ, երբ տանուլ է տրված արժանապատվությունը, իսկ չէխերը Եվրոպայի ժողովուրդների՝ նացիզմի դեմ տարած հաղթանակից օգտվելու հնարավորությունը վաստակել էին: Եվ թող ոչ մի համայնքային հայ պատմաբան չփորձի ասել, թե ռուսը, ֆրանսիացին, անգլիացին... մեզ դավաճանեցին, նախ խոստացան, որ հայկական պետություն կստեղծեն, իսկ հետո դրժեցին խոսքը: Մենք թեկուզև ամեն ռուս-թուրքական պատերազմի տվել էինք տանուլ հազարավոր կամավորականներ, ավելի քան չէխերը մեր նպաստը բերել հաղթանակների գործին, սակայն ինքներս մեր ներսում տանուլ էինք տվել Արժանապատվությունը, այսինքն՝ հենց սկզբից էինք ինքներս մեզ զրկել դաշնակցի կարգավիճակից, ռազմավարից մասնաբաժին ունենալու իրավունքից: Ու թեև այսօր հոխորտում ենք, թե Արցախում ու Հայաստանում աճել է մի նոր սերունդ, որ վարժված է ինքնուրույնությանը, սակայն պետական այրերի մակարդակով հրապարակավ հպարտանում ենք, որ, այ, եվրոպացիք եկան, տեսան և ասացին, որ մենք ամենևին չենք բնակեցրել Արցախը շրջապատած շրջանները, ավելին՝ Արցախի բնական մայրաքաղաք Շուշին է գրեթե դատարկ, թեև պատերազմի սառեցումից անցել է ավելի քան տասը տարի: Մենք պետական մակարդակով խոսում ենք շատ կոնկրետ տարածքների փոխգիջումից, մինչդեռ 1998-ին այդ պատրվակով հեղաշրջում եղավ Հայաստանում: Այդ դեպքում պետք է պատասխան տալ. ինչու՞ արվեց դավադիր հեղաշրջումը. եթե փոխգիջում (այն էլ այն դեպքում, երբ որևէ հայ պաշտոնյա մինչև 1998թ. չէր ասել, թե ինչ է զիջվելու), ապա ավելի լավ չէ՞ր փոխգիջել այն ժամանակ, երբ ռազմական բախման նոկաուտից դուրս չէր եկել զինադար աղերսող կողմը և պատրաստ էր ավելի մեծ զիջումների, երբ հնարավոր էր երկիրը կայուն խաղաղության մեջ տանել առաջընթացի ուղիով, ապահովել միայն պատերազմի ահից ու նրա բերած դժվարություններից երկիրը լքած հայերի ետդարձը, որն անհնարին է այսօր, երբ դրսում իրոք նոր սերունդ է աճել, որը Հայաստան չի տեսել, որը վարժվել է արդեն իր նոր միջավայրին, և ուսուպիայի ոլորտից է նրա տունդարձն ակնկալելը:

Ինչու՞, ուրեմն, գործեցինք Ադրբեջանի օգտին: Ու երբ հպարտանում ենք, թե, տեսեք, մենք չենք բնակեցրել նույնիսկ Հայաստանի հետ ցամաքային կապ ապահովող ռազմավարական անգնահատելի շրջանները, դա անհասկանալի է ցանկացած առողջ օրգանիզմի համար: Իսկ խոս չուտող շանն այնքան ժամանակ են թողնում մնալ դեզի վրա, քանի դեռ ձմեռը չի եկել, և

# ՈՒՆԵՆՈՋԵԼՈՎ ԱՍՏԵՂԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ

## Վանի հերոսամարտի 90-ամյակը նշվեց Թեքեյան կենտրոնում



Հայ ժողովրդի համար ճակատագրական պահեր շատ են եղել, երբ մի ողջ ժողովրդի լինել-չլինելու հարցն է առաջացել: Դժբախտաբար, կարելի է շատ այդպիսի իրողություններ հիշել: Եվ թե որևէ պատմաբան, որևէ գրագետ փորձեր Ստեֆան Յվայգի համգույն հայ ժողովրդի ճակատագրական, ինչու չէ՞ նաև աստղային ժամանակները գրի առնել, ապա 1915 թվականի Վանի հերոսամարտը իսկապես պայծառ ժամանակ պիտի դիտվեր մեր կենսագրությունում:

Վանի հերոսամարտը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման խոշոր իրադարձություններից է: Ուստի այդ իրողության ոգեկոչումը ոչ միայն պատմություն վերհիշելու և մեկ պատեհ առիթ է, այլև ներկա ու ապագա ժամանակների մեջ հաստատուն տեղավորվելու, հպարտությամբ կանգնելու ձգտման հաստատում: Այս միտումն էր հետապնդում Թեքեյան կենտրոնում օրերս կազմակերպված Վանի հերոսամարտի 90-ամյակին նվիրված երեկոն, որի կազմակերպիչներն էին Հայաստանի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչությունը և «Վան-Վասպուրական» հայրենակցական միությունը:

Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը, կարևորելով պատմական այս իրադարձությունը, նշեց, որ Վանի հերոսամարտը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ թուրքերն արդեն սկսել էին հայերի ջարդերը և նախա-

պատրաստվում էին կոտորել Վանի ամբողջ հայությանը:

Մինչև պատերազմը Վանն ուներ մոտ 23 հազար հայ բնակիչ: Պատերազմի սկզբին՝ 1914 թվականին, հարկադրաբար այնտեղ ապաստանեցին նաև շրջակա գավառների հազարավոր հայեր: 1915 թվականի ապրիլին քաղաքում կուտակվել էր ավելի քան 70 հազար հայ:

Ջարդերից խուսափելու միակ միջոցը դիմադրությունն էր: Ընդհանուր վտանգի դեմ հանդիման միասնաբար ու համերաշխ գործեցին ազգային կուսակցությունների ներկայացուցիչները՝ մի կողմ թողնելով տարածայնությունները: Ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար կազմվեց միասնական զինվորական մարմին, որը գլխավորեց ռամկավար Արմենակ Եկարյանը:

Մարտական գործողություններն սկսվեցին ապրիլի 7-ին: Առաջին տասնօրյակը հայերի օգտին էր: Ինքնապաշտպանության երկրորդ տասնօրյակն ընթացավ ծանր մարտերով: Թշնամին անընդհատ համարելով իր զորքն ու սպանագինությունը, շարունակում էր ռմբակոծել Վանը: Սակայն թուրքերը այդպես էլ չկարողացան ընկճել քաղաքի պաշտպաններին: Հայ մարտիկները հրդեհեցին թուրքական բռնապետության վերջին հենակետը՝ Հաջի Բեքիրի զորանոցը: Իսկ երբ թուրքերն ինձացան, որ ռուսական առաջապահ զորամասերը և հայ կամավորական զնդերը մոտենում են Վանին, խուճապահար դիմեցին փախուստի: Վանի բերդի վրա բարձրացվեց հայկական հաղթական դրոշը: Կարելի է ասել, որ Վանի հերոսամարտը Մեծ եղեռնի ժամանակներում հաղթական ավարտ ունեցավ՝ իր օգուտը հայերի:

Այս փաստերի մասին խոսեց երեկոյի բանախոսը՝ ճարտարապետ Վարագդատ Հարությունյանը, ով երկու տարիներ ղեկավարում է «Վան-Վասպուրական» հայրենակցական միությունը:

Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ Եպիսկոպոս Կոչյանը ողջունելով հավաքի մասնակիցներին՝ իր խոսքում շեշտեց հայ ոգու հզորությունը, որը և եղավ Վանի հերոսամարտի հաղթանակի հիմնական գրավականը:

Տկարության պատճառով հավաքին ներկա չէր ծագումով և ոգով վանեցի, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, որի գրավոր խոսքը հավաքի մասնակիցներին ներկայացրեց ասմունքող Սվետլանա

Խանունյանը: «Թանկագին հայրենակիցներ, գրել էր բանաստեղծուհին, ցավում եմ, որ տկարության պատճառով չեմ կարող ներկա լինել ձեր հանդիսությանը: Մեր սիրելի ասմունքողուհի Սվետլանա Խանունյանի միջոցով ձեզ եմ փոխանցում իմ սրտագին ողջույնները և շնորհավորում Վանի պանծալի հերոսամարտի 90-ամյակի առիթով, մի հերոսամարտ, որը ցայտուն վկայությունն է, թե ինչպես աշխատասեր, իր հող ու այգուն, իր արդար արիեստներին նվիրված մի ժողովուրդ կարող է ոտքի կանգնել, ինքնամոռաց կռվել ու հերոսանալ, երբ որ թշնամին սպառնում է իր հող ու այգուն, իր կնոջ ու երեխաներին, իր գոյությանը: Վանի հերոսամարտը բաղկացուցիչ մասն է մեր ազգի պատմական հիշողության և դրանով իսկ կապի հավերժ ու իր օրինակով կապրեցնի սերունդներին: Վերեն հպարտ լինենք մեր բնաշխարհի Վան-Վասպուրականով, նրա ազնիվ կերպարով, սիրենք ու փայփայենք նրա հիշատակը մի օր այնտեղ վերադառնալու անթառամ հույսով...»:

Հավաքը ողջունեցին «Վան-Վասպուրական» հայրենակցական միության ԱՄՆ-ի մասնաճյուղի (Լոս Անջելես) նախագահ Վարդան Թովմասյանը, ՀՀ Աժ նախագահին առընթեր հայրենակցական միությունների խորհրդի ներկայացուցիչ Դավիթ Ալեքսանյանը և ուրիշներ: Հանդիսության մասնակիցները ևս մեկ անգամ հաճույքով ունկնդրեցին Ջիվան Գասպարյանին: Վարպետի նվագը հուզեց բոլորին:

Մեզ հետ զրույցի ժամանակ արժանապատիվ Տաճատ ավագ քահանա Դավթյանը (Արարատյան հայրապետական թեմի երիտասարդաց շարժման ավագ խորհրդրդատու, հոգևոր ճեմարանների դասատու) նշեց, որ ամեն մի ժողովուրդ, ամեն մարդ պիտի հիշի իր պատմությունը: «Եթե մենք կորցնենք մեր հիշատակները, նշեց տեր հայրը, ապա կկորցնենք մեր ազգային գինակցությունը: Տարիների ընթացքում, երբ կարդացի մեր պատմությունը, հասկացա, որ մենք նապաստակ ժողովուրդ մը չենք: Մեզ համար համակարգիչներից, բարդ ծրագրերից առավել պետք է մեր պատմությունը, որ ազգը կապրեցնե»:

Տեր հոր խոսքի իմաստը թևածում էր Թեքեյան կենտրոնում կազմակերպված և հաջողված երեկույթի ժամանակ:

**Սերգեյ ԳԱԼՈՅԱՆ**

դրանով դեռ պետք չէ կերակրել խոտանարակին: Իսկ ձմեռը մի օր օրալիս է:

Ի՞նչ կատեգորիայով պիտի դատել մեր արժանապատվության մասին, եթե կռվում ենք, վերցնում ենք, հեղաշրջում ենք անում իբր պահելու համար և հանկարծ հայտարարում ենք, թե ետ ենք տալիս ամբողջությամբ, թե պատրաստ ենք Ադրբեյջանի հետ ոչ ուղղահայաց ցանկացած կարգավիճակի. գուցե հորիզոնական, գիզգզազած: Կնշանակի, իրոք որ, «...կյանքը ցույց կտա, թե ով ինչ է արել Արցախի համար, և ով է իրականում ծախում այն»:

Ժամանակը, այո, ցույց կտա, եթե միայն չկարողանանք արգելել ցանկացած վաճառք, որը մինչև ստորագրման պահը, երևում

է որպես հայրենասիրություն (բայց ավանդական), արժանապատվություն (բայց գլխիվայր շրջված): Իսկ այն, որ այս ամբողջ գրության մեջ անարժանապատվության բոլոր դրսևորումների մասին խոսվեց առաջին դեմքով, ամենևին չի նշանակում, թե ժողովուրդն է անարժանապատիվ: Քավ լիցի: Դա արվեց մեկ նպատակով. ժողովուրդը պարզապես պատասխանատու է իր ծնած այսօրվա վերնախավի վարքի, իշխանության վրա մնալը հանդուրժելու համար: Իսկ մեր ժողովուրդը թեև համբերատար, բայց փառք Աստծո, անպատասխանատու չէ:

**Սիդայել ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ**

# ՀԱՅԱԶԳԻ ԹԱԳՈՒՅԻՆԵՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՄՐԲԱԶԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

## Հարցազրույց ֆրանսահայ գիտնական Արմեն-Կլոդ Սուրբաֆյանի հետ

**- Պարոն Սուրբաֆյան, ամիսներ առաջ մեկնեցիք Սիաց-յալ Նահանգներ՝ մասնակցելու «Պատմական Հայաստանի նահանգներն ու քաղաքները» շարքի՝ Երուսաղեմին նվիրված գիտաժողովին: Որքան հայտնի է, նախորդ գիտաժողովները վերաբերում էին Արևմտյան Հայաստանի և այժմյան Թուրքիայի մնացյալ տարածքի հայաշատ վայրերին՝ Սեբաստիա, Կարին, Խարբերդ... Խնդրում եմ համառոտ պատմել համաժողովում կարդացած Ձեր զեկուցման մասին:**


- Լոս Անջելեսի համալսարանի դասախոս Ռիչարդ Հովհաննիսյանը հայության վերաբերյալ, իրոք, հետաքրքրական ձեռնարկներու շարք մը պատրաստած է:

Ես երկու անգամ մասնակցած եմ հիշյալ գիտաժողովներուն. մեկը նվիրված էր Կիլիկիային, մյուսը՝ Անիին: Լավ է, որ ժողովներու ընթացքին կարդացված զեկուցումները լույս կտեսնեն առանձին գիրքով: Նման չորս գիրք արդեն կա: Իմ զեկուցումս հայոց թագավորության հետ Երուսաղեմի ունեցած առնչություններուն կվերաբերի: Երուսաղեմի մեջ երեք հայ թագուհիներ եղած են, սակայն հայկական վավերաթուղթերուն մեջ այդ մասին հիշատակություն չկա: Եղած աղբյուրները լատին կամ արաբական են: 1099թ. խաչակիրները գրավեցին Երուսաղեմը, այնուհետև անցան Կիլիկիան և շփման մեջ մտան հայ իշխաններու հետ: Խաչակիրներու մյուս մասը գնաց Եդեսիա՝ Ուրֆա: Այնտեղի հունադավան հայ իշխանները, Եդեսիո կառավարիչ Թորոսը, որ երթալկա էր բյուզանդական կառավարության, վտանգի մեջ էին (շրջապատված էին թուրքերով): Խաչակիրներեն Բաղդուխըն Թորոսին հեռացուց և ինք մատավ անոր տեղ: Եդեսիան դարձավ առաջին լատին պետությունը, թեև բնակչության կեսեն ավելին հայ էր: Որպեսզի այդ հայերուն տիրե, դիվանագիտական քայլ պետք էր անել՝ ամուսնանալ հայ իշխանուհիի մը հետ: Այդ, բացառություն չէր, քանի որ խաչակիրները արևելք կուգային ու պիտի իոն հաստատվեին: Ուրեմն՝ հայ իշխանուհիներ պիտի փնտռեին իրենց համար: Մահմեդական իշխանուհի չէր կրնար ըլլալ: Հույն իշխանուհին մուսուլման բացառված էր, քանի որ ատելություն կար անոնց հանդէպ: Ասորիները, ճիշտ է, քրիստոնյա էին, սակայն ֆեոդալական կառույց չունեին, իշխանի, իշխանուհիի գաղափար չկար, կմային հայերը: Բաղդուխն կոմսը, Երուսաղեմի գրավումեն ետք, դարձավ Երուսաղեմի թագավոր, և լատին առաջին թագուհին հայ տիկինը եղավ: Հիշյալ Բաղդուխին հաջորդեց մեկ այլ Բաղդուխն, որուն հայ իշխանուհի կինը Մաֆիա կկոչվեր, անունը հունական էր, որով հետևա ինքնադավան էր:

1118 թվականին, Բաղդուխին մահեն ետք՝ Բաղդուխն երկրորդը, որ Եդեսիայեն էր, գնաց Երուսաղեմ և հաջորդեց առաջինին: Երուսաղեմի երկրորդ թագուհին ալ հայ էր: Սովորաբար իշխանուհիները կմեղադրվեին, եթե երեխա չունենային և կամ միայն աղջիկներ ունենային: Բաղդուխն առաջին կինը երեխա չունեցավ. ամուսինը միասեռական էր: Իսկ Բաղդուխն երկրորդի կինը չորս աղջիկ ունեցավ: Բնականաբար պիտի իշխեր անոնցմե մեկը: Թագուհի դարձավ ավագ դուստրը՝ Մելիզանդը: Երուսաղեմի պատմության մեջ ան հայտնի է որպես փայլուն դիվանագետ-թագուհի: Ան ամուսնացավ ֆրանկ ասպետի մը հետ՝ Ֆուլկ անունով, սակայն իր գործունեությամբ մշտապես կզգացներ, որ թագավորողը ինքն է: Մելիզանդի ամուսինին մահեն ետք անոր երկու զավակներեն առաջինը դարձավ թագավոր՝ Բաղդուխն երրորդ, սակայն իշխողը նոր հայ թագուհին էր: Թագուհին նաև մեծ արվեստասեր մըն էր: Ֆրանսայի Ազգային գրադարանին մեջ լատիներեն ձեռագիր մը կա, որուն էջերը՝ փոխանակ թվերու, հայ տառեր կկրեն: Ինչպես կտեսնենք, Մելիզանդ թագուհին հետը հայ արվեստագետներ բերած էր. ուրեմն՝ 1140 թվականին գիրք կազմողը հայ արվեստագետ մըն էր:

12-րդ դարու եպիսկոպոս, լատին պատմաբան մը՝ Կյուրոս քաղաքեն, կգրե, թե Մելիզանդ երեսուն տարի փայլուն կերպով թագավորած է, որովհետև չափազանց խելացի, բացառիկ մեկը եղած է:

Ուրիշ հետաքրքրական բան մը. որևէ աղբյուր չկա, թե Երուսաղեմի Ս. Հակոբեանց վանքը երբ կառուցված է, ինչ պայմաններու մեջ, ո՞վ շինած է... Սակայն հետաքրքրական զուգահեռություն մը կա. արվեստաբաններու կարծիքով եկեղեցին կառուցված է



12-րդ դարու կեսերուն, իսկ այդ Մելիզանդ թագուհիի ժամանակն էր: 1142-ին կամ 1443-ին Երուսաղեմի մեջ լատին մեծ ժողով մը տեղի ունեցած է, որուն հրավիրված էր նաև Հայոց կաթողիկոսը՝ Գրիգոր Գ (Երրորդ) Պահլավունին՝ Ներսես Շնորհալիի մեծ եղբայրը: Այդ նույն պատմաբանը կգրե, որ Հայոց կաթողիկոսը շուքով ընդունվեցավ, քանի որ մեծ դեմք էր: Բացառված չէ, որ վանքի կառուցման որոշումը այս երկու բացառիկ անձնավորություններու հանդիպումին արդյունքը եղած ըլլա: Ուրիշ աղբյուր չկա: Անկարելի է նաև, որ Գրիգոր Գ Պահլավունի հանդիպած ըլլա Մելիզանդ թագուհիին: Լատին պատմաբանը մեծ հիացմունքով կնկարագրի կաթողիկոսին մուտքը ժողով: Մելիզանդ թագուհին նաև կրոնասեր էր: Ուրեմն, հավանականություն կա, որ թագուհին որոշ դեր ունեցած ըլլա վանքի կառուցումին մեջ:

Այսպիսով, Մելիզանդը Երուսաղեմի թագուհին էր, մյուս քույրը Անտիոքի իշխանին հետ ամուսնացավ, երրորդը Տրիպոլիի կոմսի կինն էր: Լատին չորս պետություններեն երեքին վրա հայ իշխանուհիներ կիշխեին: Իսկ Եդեսիո կոմսին մայրը հայուհի էր: Ամենուրեք հայ իշխանություններ կգործեին:

Երբ 1187 թ. Երուսաղեմը գրավվեցավ Սալահեդդինի կողմէ, Անգիոն թագավորը՝ Ռիչարդ Առյուծախիտը, սկսեւ որոշ հատվածներ ետ գրավել, սակայն առանց Երուսաղեմի: Եդեսիո կոմսությունն արդեն կորսված էր, վերակառուցվեցավ Անտիոքի իշխանությունը, բայց ավելի փոքր, Տրիպոլիի կոմսությունը՝ նույնպես փոքր և, վերջապես, Երուսաղեմի թագավորությունը, որ մայրաքաղաք հռչակեց Աքքան, որ նաև նավահանգիստ էր: Եվ եղավ Երուսաղեմի թագավորությունն առանց Երուսաղեմի:

Լատին թագավորություն մըն ալ հիմնվեցավ Կիպրոսի մեջ, ֆրանսական Լուզինյաններու իշխանության տակ: Լեոն թագավորը իր անդրանիկ աղջիկը ամուսնացուց Երուսաղեմի թագավորի՝ Հովհաննես Բրիենցիի հետ. ան դարձավ Երուսաղեմի երրորդ թագուհին: Լեոն թագավորը կկտակե, որ իրեն պետք է հաջորդե կրտսեր դուստրը՝ Զապելը: Եթե ավագ աղջիկը հաջորդեր, Կիլիկիան պետք է Երուսաղեմին պատկաներ: Հայոց թագավորությունը գոյատևեց Զապելի շնորհիվ:

### **- Գիտաժողովի ուսումնասիրությունների շրջանակը հետաքրքրական էր:**

- Շատ: Մանավանդ, որոշ դիցաբանական նյութեր ալ ներկայացվեցան: Այժմ, ինչպես գիտեք, Երուսաղեմի կացությունը դժվարին է: Եկեղեցիին վիճակն ալ փայլուն չէ: Նորայր արքեպիսկոպոս Պողարյանի մահեն ետք մեկը չկա, իսկապես գիտուն մեկը, որ գործե այնտեղ: Հայաստանի Մատենադարանեն ետք Երուսաղեմինը հայ ձեռագրերու երկրորդ հավաքածուն է աշխարհի մեջ: Կիլիկիայի ամենաշքեղ ձեռագրերը կգտնվին Ս. Հակոբի ձեռագրատան մեջ:

Ամբողջ աշխարհին մեջ Թորոս Ռոսլինեն յոթ մուշ պահպանված է, անոնցմե չորսը՝ Երուսաղեմ կգտնվի: Այստեղ են նաև Գերան թագուհիի 1270 թվականի ամենանշանավոր ձեռագրերը: Թանգարանին մեջ նաև երկու մետրեն ավելի երկարություն ունեցող սաթե զավազան մը կա, որուն ծայրը արծաթ է: Ան, սակայն, ցույց չի տրվի այցելուներուն: Ըստ ավանդության՝ Հեթում թագավորին զավազանն է, բայց ո՞ր Հեթումի, փաստ չկա: Բավական ուսումնասիրած եմ օտար դիվաններ և եզրակացուցած, որ Հեթում 2-րդին պատկանած կըլլա, եթե հաստատվի, որ ան

Երուսաղեմ մտած է 1299 թվականին՝ որպես մոնղոլներու դաշնակից:

- Մի հարց ևս ե՞րբ հիմնվեցավ Սուրբ Չապուրի վանքը: Միքայել Չամչյանը կզրե, որ 1311 թվականին Երուսաղեմ գիտաժողով մը հրավիրվեցավ, սակայն Երուսաղեմի պատրիարքը մերժեց այդ գիտաժողովին եզրակացությունները և ուղեց բաժնավիլ: Գնաց Սամուր սուլթանին քով, որպեսզի զինք կարգեն անկախ պատրիարք: Հիմնվեցավ պատրիարքարանը, որն այնուհետև ենթարկվեցավ Ամենայն հայոց կաթողիկոսին: Որքան ալ ճշգրտենք, նորեն Միքայել Չամչյանին կհանդիպենք: Ուրեմն, 14-րդ դարու կեսերու հիմնվեցավ Երուսաղեմի պատրիարքարանը: Թվականները դեռևս ճշտված չեն: Երբ կհետևինք շրթային, նորեն կհասնինք Չամչյանին, այսինքն՝ 1785 թ.: Դժբախտաբար, ինչպես այդ շրջանի բոլոր պատմաբաններուն քով, Չամչյանի մոտ ալ աղբյուրները չեն նշված:

Լուս Անցելեսի գիտաժողովի քննարկումները մերթ ընդ մերթ զգացական ու կրքոտ վեճերու վերածվեցան: Վերջին գեկուցողը Սոսի Անտեգյանն էր՝ «Երուսաղեմի կեդրոնական դերը աշխարհի հայերուն համար» թեմայով, ուր խոսվեցավ նաև Երուսաղեմի որպես երեք մեծ կրոններու սրբազան քաղաքի մասին տարածք մը, որ միջազգային քաղաքական խնդիրներու լուծման կարիք ունի և, հետևաբար, քաղաքին միջազգայնացումը կրնա հայոց կացությունը բարեփոխել ու կայունացնել: Գիտաժողովը փակվեցավ մեծ հանդիսավորությամբ: Եզրափակիչ խոսքին մեջ պրոֆեսոր Ռիչարդ Չովհաննիսյանը հայտարարեց, որ այս շարքը պիտի ընդհատվի Մեծ եղեռնի 90-ամյակին առիթով, որպեսզի կարելի ըլլա կազմակերպել այդ օրվան նվիրված միջազգային նոր գիտաժողով մը:

*Հարցազրույց Գոհար ԱճեՄՅԱՆԻ, Փարիզ, փետրվար, 2005 թ.*

# ՆՈՎԵԼԻՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

**Բրիտանական «Times» թերթի հավելվածում՝ «Sunday Times»-ում, հուլիսի 10-ին տպագրվել է «Բզկտված հոգիների երկիրը» վերնագրով մի հոդված: Հոդվածը, որի հեղինակը նովելիստ է, Հայաստանի մասին է:**

*Իհարկե, Հայաստանի մասին արտասահմանյան մամուլում բազմաթիվ հոդվածներ են տպագրվում, սակայն «Բզկտված հոգիների երկիրը» դրանց շարքում առանձնանում է նրանով, որ Հայաստանն այնտեղ նկարագրված է գրողի աչքերով, հետևաբար նաև նյութը ավելի շատ զեղարվեստական է: Եվ քանի որ նյութը բավական մեծ է ամբողջությամբ տպագրելու համար, իսկ զեղարվեստական ստեղծագործությունը վերապատմելն անշնորհակալ աշխատանք է, ստորև ներկայացնում ենք հատվածներ «Բզկտված հոգիների երկիրը» նյութից.*

«Ահա ես գտնվում եմ արևոտ և պայծառ մի տան մեջ, որի ներքնահարկի հատակի տակ թաղված է դեռևս չպարթած ական: Բարեբախտաբար, ինձ մոտ մի քիչ կոնյակ ունեն: Նայում եմ ետնաբակին, իսկ հորիզոնում ձյունաճերմակ սարեր են, և փորձում եմ համակերպվել այս տեղանքի ծայրահեղ յուրահատկությունների հետ: Հայաստանում կանգ է առել Նոյի տապալումը: Այստեղ դեռևս թափառում են ընծառուները: Այս հողում եմ ծնունդ առել ծիրանն ու կեռասը: Հայ միտքը իր կնիքն է դրել մարդկային ձեռքերումների համաշխարհային պատմության մեջ: Անտառներում շրշում են կաղնիներն ու նշենիները, տիլենին ու վայրի հասմիկը: Այստեղ է ստեղծվել առաջին քրիստոնեական պետությունը: Եվ անհնար է Հայաստանում անցնել մի տան կողքով առանց ներս հրավիրվելու՝ մի բաժակ սուրճի, շոկոլադի, եթե ոչ կոնյակի համար: Դրախտ: Ես գտնվում եմ դրախտում, իսկ իմ կողքին իսկական ական: Տանտերն ինձ ուղեկցում է ականը ցույց տալու: Այն կիսով չափ գտնվում է հողի մեջ՝ սենյակի անկյուններից մեկում: Դրսում արևի տակ մոտավորապես 20 աստիճան է, իսկ ներսում կլիմի մոտ երեսուն աստիճան: Տանտերը մոթմոթում է, խոժոռ հայացքով մայում ականին և տշում այն: Լուռությոն է տիրում: Եվ մենք չենք պայթում: «Ոչինչ չի կարող նախապատրաստել ձեզ Հայաստանի համար: Իր ամբողջ հասուն գեղեցկության, քմահաճ հմայքի կողքին ես այնտեղ տեսա զրկանք՝ հավատը սասանող և նսեմացնող զրկանք: Ես Հայաստան էի գնացել իմ հաջորդ նովելի հերոսուհու հարավկովկասյան կերպարը լավագույնս ստեղծելու համար շոշափուններ և ուսումնասիրություններ անելու: Համեմայնդեպս այդպես էի մտածում, երբ ինքնաթիռ բարձրացա: Սակայն իմ հիմար ճամպուկը, հավի և տավարի մսի միջև իմ անիմաստ ընտրությունը՝ այս ամենը դարձան իրականության հանդեպ վիրավորանք այն պահից սկսած, երբ մեր ինքնաթիռը ճեղքեց երևանի վրա գոյացած մառախուղը և հայտնվեց ձյունապատ և սառցակալած թռչչքուղու վրա: Հիշողության մեջ ունենալով մեր արևմտյան գոյության փոքրիկ հարմարավետությունները՝ ես տեղավորվեցի կղկղանքի և մեզի գարշահոտության մեջ, 83-ամյա մի կնոջ մեկ սենյականոց բնակարանում: Նա ինձ պատմեց հետևյալը. «Երբ պատերազմը սկսվեց, ես ցանկացա ապահովել իմ ընտանիքի անդամների ամվատագությունը: Իմ որդին, հարսը և թոռնիկները՝ ուր և վեց տարեկան ու վեց ամսեկան երեխաները, ուրիշ մեքենա նստեցին, որը, սակայն, դարձավ աղբյուրանցիների կրակոցների թիրախը: Ես նրանց ետևից գնացի հիվանդա-

նոց, որտեղ միայն հինգ դագաղ գտա»):

«Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը Հարավային Կովկասի տարածաշրջանի առաջին պատերազմական կետն էր: Այն շրջապատված է թուրքական և աղբյուրանական թշնամական սահմաններով: Բայց երբ 83-ամյա ծեր կինը իր կոշիկների վրայից գուլպաներ հագավ բնակարանի սառույցի վրայով քայլելու համար, ես սկսեցի հասկանալ, որ խնդիրն այստեղ միայն պատերազմը չէ: Սև և Կասպից ծովերի արանքում ցամաքով շրջափակված այս փոքրիկ գոհարի պատմությունը շատ ավելի խորքերում է թաքնված: Չար ճակատագիրը այցելեց երկիր 1988 թվականին՝ հզոր երկրաշարժ, որ 20 հազար կյանք խորտակեց, իսկ 500 հազար մարդու զրկեց տանիքից, թշնամություն հարևան Ադրբեջանի հետ, Խորհրդային Միության փլուզում, իսկ Խորհրդային Միության հսկողության տակ Հայաստանը կայունություն և զարգացում էր վայելում: Այդ ժամանակ Հայաստանին մեծ ուշադրություն էր հատկացվում, և բոլոր կողմերից օգնություն էր տրամադրվում: Սակայն այն ժամանակ, երբ այդ ամենի թարմությունը անցավ, երբ էլ ավելի էկզոտիկ և ճրնջող աղետներ համակեցին հանրային միտքը, աջակցության մեծ մասը անհետացավ»: «Ջինադադարից ավելի քան մեկ տասնամյակ հետո Հայաստանը գտնվում է աղքատության մեջ, ենթակառուցվածքները նեխում են: Թճշակները, եթե իհարկե վճարվում են, մոտավորապես ամսեկան վեց դոլար են կազմում, այն դեպքում, երբ վառելիքի գները մոտ են ամերիկյան գներին»: «Երբ Ադրբեջանի հետ սահմանից անսպասելի կրակոցներ լսվեցին, և երբ քաղաքներից մեկում ինձ տեղեկացրին, որ քաղաքապետը նոր հրազոն է ձեռք բերել և գիշերը պետք է դուրս գա փողոց թափառող շների վրա կրակելու համար, դրանից հետո ես միացա և իմ ճանապարհորդությունը շարունակեցի «Բժիշկներ առանց սահմանի» ընկերության մի խմբի հետ: Այսպիսով, խմբի ղեկավար, երիտասարդ բեկդիսի սոցիոլոգ Լյուկ Վան Բիլենի հետ ես ճանապարհվեցի դեպի խելահեղների մութ աշխարհ: Ես երբեք չէի կարող պատրաստ լինել այն ամենին, ինչ պետք է տեսնեի այնտեղ: Ճամբարակ ամուսնով բնակավայրի կենտրոնում թալանված ու լքված տվեական մի շինություն կա: Լյուկ Վան Բիլենն ինձ ուղեկցեց ներս՝ ասելով. «Երբ ես առաջին անգամ տեսա այս վայրը, անմիջապես հասկացա, թե ինչու եմ Հայաստանում»: Մեր առաջ բացվեց մի դուռ, որից այն կողմ ծխի ամպեր էին կուտակված, այնքան թանձր, որ բավական էր աչքերն այրելու և շնչահեղձ լինելու համար: Սենյակում, որը շատ մեծ էր մեկ մահճակալի, մեկ սեղանի և մեկ պահարանի համար, նստած էր Համեստ անունով կինը իր երեք երեխաների հետ: Նրանք Ադրբեջանից փախել էին 15 տարի առաջ: Այդ ամբողջ շենքը փախստականների կացարան էր: Սակայն այս ընտանիքն առանձնանում էր ինչ-որ կուրիոզային և անսպասելի բանով: Պարզվեց Համեստը, նրա ամուսինն ու երեխաները տառապում էին մտավոր հետամնացությամբ: Ամուսինը պարբերաբար ծեծում է կնոջը, և կասկածներ կան, որ նրանց աղջիկները սեռական չարաշահումների են ենթարկվում տեղի տղամարդկանց

կողմից: Իսկ երբ Համեստի անուսինը տանը չի լինում, նրան են այցելում ռազմական կայանների գինվորները՝ սեքսի համար: Ունանք, հիարկե, այնքան բարի են գտնվում, որ Համեստին անհանգստություններ պատճառելու դիմաց ինչ-որ բան են թողնում՝ մեկ տուփ ատամի մածուկ կամ մի կտոր հաց: Ի վերջո կացարանի անմարդկային մթնոլորտը հագեցնում է ինձ: Հայաստանում մտավոր հետամնացությամբ տառապող մարդիկ իսկական խարան են կրում իրենց վրա: Հոգեկան խանգարման ավելի մեղմ տեսակները՝ դեպրեսիան և հուզմունքն, ընդհանրապես արհամարիված են: Այն, ինչով զբաղվում է Վան Բիլենն այստեղ, մի նպատակ ունի՝ այդ մարդկանց վրայից վերացնել խարանը: Ճամբարակում բացվել է «Բժիշկներ առանց սահմանի» ընկերության առաջին կենտրոնը, որը ոչ միայն հոգեկան

անհավասարակշիռ մարդկանց համար է, այլև ավելի մեծ հասարակության: Մարդիկ այցելում են այնտեղ թեկուզ միայն տաքության, սուրճի և գրույցների համար: Լյուկ Վան Բիլենի աշխատանքը շուտով ավարտվում է: Եվ ինչպես փոքրիկ ակնթաթ ավարտվում է նաև իմ ճանապարհորդությունը: Վան Բիլենը կանգնած է ճամբարակի իրենց կենտրոնի առաջ, կտրող ցրտի մեջ: Ես հետաքրքրվում եմ, արդյո՞ք նա շտապում է վերադառնալ Եվրոպա: Իսկ ինքը պատասխանում է, որ վերադառնալու ծրագրեր ընդհանրապես չունի. «Ես գիտեմ, որ երբ վերադառնամ, առաջին բանը, որ կլսեմ, ինչ-որ մեկի դժգոհությունն է լինելու այն բանի համար, որ իր գնացքը հինգ ռուպե ուշացել է: Ես վստահ չեմ, որ կարող եմ հանուրժել դա», - ասում է նա:

# ՀԱՏՎԱԾ «ԻՄ ԿՅԱՆՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ»

## ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

**ՄԱՐՈ ԱԼԱԶԱՆ**

Վահրամ Ալազանը հաճախ էր շրջաններ գնում՝ ստուգելու տեղի գրական խմբակների աշխատանքները: Գրական երեկուներ և բանավեճեր էր կազմակերպում, ծանոթանում էր նրանց գրական ուժերին և ուղղություն էր տալիս աշխատանքներին: Մի անգամ Լենինականից վերադառնալով՝ զարմացած և հիացած պատմեց հետևյալը.

- Առավոտյան շատ շուտ, առանց դուռը թակելու, հյուրանոցի իմ համարը մտավ իսկական անապատան մի տղա. մազախեղձի, կեղտոտ ու մաշված հագուստով, քաղաքավարական տարրական կանոններից զուրկ:

- Ալազանը դուր ե՞ս:  
- Այո, ես եմ:  
- Վերցրո՞ւ այս բանաստեղծությունը կարո՞ւ: Տպելու է՞ տպիր, տպելու չէ՞ ճղիր, դե՞ն գցիր:

Ալազանը պայուսակից հանեց և ինձ համար կարդաց այդ բանաստեղծությունը:

*Հին աշխարհը չեմ տեսել  
Հին աշխարհը չեմ տեսել*

*Ու ոչ մի բան չեմ հիշում,  
Ու չեմ նրան երագել*

*Իմ հուշերի մշուշում:  
Բայց երբ նայում եմ խաղաղ,*

*Մորս դեմքի դալուկին,  
Ինձ թվում է , թե մի պարզ*

*Վիշտ է եղել կյանքը հին:  
Հին աշխարհը չեմ տեսել*

*Ու ոչ մի բան չեմ հիշում,  
Բայց թողել է նա մի թել*

*Մորս աչքի մշուշում:  
- Բանաստեղծությունը կարդալուց հետո,*

- շարունակեց Ալազանը, - ավելի հանգամանորեն և զարմացած նայեցի այդ տղային և վերջնականապես համոզվեցի, որ այդ բանաստեղծության հեղինակն ինքը չէ, բայց և այնպես վերցրի տպագրության: Կասկածս փարատելու համար խոսեցի Լենինականի մի քանի գրողների հետ: Նրանք ասեցին, որ կա այդպիսի մեկը, որ իբր բանաստեղծություններ է գրում Հովհաննես Շիրազ ստորագրությամբ:

- Իսկ ինչո՞ւ նրան ձեր գրական խմբակներում չեք ընդունում:

- Նրա համար ի՞նչ գրական խմբակ, ի՞նչ գրականություն. ամբողջ օրը շուկայում եզրիներից յուղ ու մածուն է թռցնում, - պա-

տասխանեց գրողներից մեկը:

- Բայց և այնպես դուք նրան ընդունե՞ք ձեր գրական խմբակում. գուցե նա փոխի իր «մասնագիտությունը» և իսկական գրող դառնա:

Ապա Ալազանը բանաստեղծությունը ինձ մեկնելով՝ ասաց.

- Մեքենագրի երկու օրինակից, տանեմ «Գրական թերթ»-ում տպեն, եթե այս բանաստեղծությունն իսկապես այդ անապատան տղան է գրել, ապա նրանից մեծ բանաստեղծ դուրս կգա. ես պետք է ձեռքս վրան պահեմ, տեսնեմ ինչ կստացվի:

Շիրազի անդրանիկ բանաստեղծությունը տպվեց «Գրական թերթ»-ում:

Որոշ ժամանակ անց Շիրազից ստացանք մի նամակ, որտեղ չափածո խոսքով շնորհակալական խոսք էր գրել Ալազանին և՛ մի նոր բանաստեղծություն: Ի դեպ Շիրազի՝ Ալազանին գրված բոլոր նամակները մի-մի չքննադ բանաստեղծություններ էին:

Ալազանը Շիրազին անապատների շարքերից դուրս քաշելու նպատակով ամեն ամիս որոշ գունար էր ուղարկում, բացի այդ, Լենինականի «Բանվոր» թերթի խմբագիր Հմայակ Սիրասին խնդրեց, որ իր հոնորարները տա Հովհաննես Շիրազին:

Ալազանի՝ Լենինականից վերադառնալուց մեկ ամիս անց, մեր տան դուռը ուժեղ բախեցին: «Երկի մածուն ծախող եզրին կլինի» մտածեցի և դուռը բացեցի: Դիմացս կանգնած էր զգզված մազերով, թափթիված ու հնամաշ հագուստով մի տղա: Նրա ամեն ինչ լինելու մասին մտածեցի, բայց որ նա կարող էր գրող լինել... մտքովս անգամ չաճցավ:

- Ընկեր Ալազանը տունն է՞:  
- Այո, խնդրե՞մ ներս մտեք, - ասացի ես խղճախար տոնով:

Նա առանց ինձ բարևելու, առաջ ոտքերը մաքրելու, ցեխաթաթախ, հնամաշ կոշիկներով իմ այլևս հատակը դաջելով՝ Ալազանի առանձնասենյակը մտավ:

- Օ՜, Շիրազ ջան, արի, մոտ արի, աթոռը վերցրո՞ւ ու մտի՛ր:

Շիրազ անուրը լսելով՝ ես զարմանքից ու հետաքրքրությունից դրված անմիջապես մտա Ալազանի առանձնասենյակը և սկսեցի ուշադիր դիտել նրան:

Ալազանը, ձեռքը Շիրազի ուսին դնելով,

ժպտալով ասաց.

- Շիրազ ջան, բանաստեղծություններիդ հոնորարները ստացա՞ր:

- Ի՞նչ:

- Տպվածո՞ւ բանաստեղծությունների փողը ստացա՞ր:

- Եղ ի՞նչըխ կեղնի, համ բանաստեղծություններս ես տպում, համ էլ փող ես տալիս:

- Այո, տպված բանաստեղծությունների համար փող եմ տալիս, - պատասխանեց Ալազանը:

- Ես լավ եղավ, սրանից հետո շատ կգրեմ, որ շատ հոնորար ստանամ՝ բարձր տրամադրությամբ ու ծիծաղելով ասաց Շիրազը: Հետո ծոցագրպանից հանեց երկու նոր բանաստեղծություն և դրեց Ալազանի գրասեղանին: Ալազանը մեր ներկայությամբ բարձրածան կարդաց այդ բանաստեղծությունները, մի որոշ շտկումներ անելուց հետո, ինձ տալով՝ ասաց.

- Մարո ջան, այս բանաստեղծությունները հենց հիմա մեքենագրի «Գրական թերթ»-ի այս համարի համար: Ապա Շիրազին դառնալով, նրան իր թևի տակին սեղմելով՝ գորովագութ խոսքերով ասաց.

- Բայց Օճիկ ջան, քեզ մի բան ասեմ. դու արդեն գրող ես, բոլորը քեզ գիտեն, դու քեզ գրողին վայել պետք է պահես, եղա՞՞վ:

- Եղավ, ազնիվ խոսք եմ տալիս, որ քո բոլոր ասածները սրբությամբ կկատարեն, - ասաց Շիրազը՝ աշակերտի պես ուսուցչի առջև կանգնելով:

Նրանք միասին դուրս եկան և գնացին Գրողների տուն:

Եվ այսպես Ալազանի և Շիրազի միջև սկսվեց ջերմ ու հարազատ, եղբայրական մտերմություն և նույնքան անկեղծ նամակագրություն: Ես Շիրազին միշտ իմ տեսադաշտում պիտի պահեմ, որ նա իր հին «մասնագիտությամբ» չզբաղվի և իր հին ընկերների ազդեցության տակ չընկնի, - ասում էր Ալազանը և այդ նպատակով էլ Շիրազին տեղափոխեց Երևան և տեղավորեց մի գյուղացու տանը:

Մի անգամ Ալազանը, Շիրազն ու ես Արովյան փողոցում զբոսնում էինք: Մեզ մոտեցավ Չարենցը: Շիրազն իսկույն հեռացավ:

- Այ տղա Ալազան, էդ տղային շատ չե՞ս երես տալիս: Չլինի կարծում ես՝ նոր Տերյան ես հայտնաբերել, - ասաց Չարենցը

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ

## ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ

## ՄԵՐՈՆՔ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Բենտ Ջուզեպին հայտնել է, որ օգոստոսի 5-ին Թբիլիսիում կբացվի հայկական ծխախոտի գործարան: Հայաստանի գործարարների ներդրումը կազմել է շուրջ 4 միլիոն դոլար: Պատգամավորի խոսքերով, գործարանում կարտադրվի շուրջ 32 անուն ծխախոտ, կօգտագործվի հայկական հումքը: Հեռանկարային աշխատակազմը համալրված կլինի տեղացիներով, և առաջին փուլում արտադրանքը կսպառվի վրաստանյան շուկայում:

«Ռազմական ծախսերի աճն Ադրբեջանում կարող է հանգեցնել նոր պատերազմի»: Այսպիսի տեսակետ է հայտնել «Ֆրանս պրես» գործակալությունը՝ հրապարակելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունն այն մասին, թե «այս տարի ռազմական ծախսերն աճել են 76 տոկոսով: Շուտով մենք կստեղծենք հզոր բանակ և ի վիճակի կլինենք ազատագրել մեր տարածքները»:

Ռուսաստանի Յարուսլավլ քաղաքում սեպտեմբերին «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի աշխարհի առաջնությանը 25 երկրներից ժամանած թիմերի շարքում առաջին անգամ կմասնակցի նաև Հայաստանի թիմը: Հայաստանը կներկայացնի Հայաստանի Հանրապետական կուսակցության թիմը, որը 2004թ. Հարավկովկասյան առաջնության չեմպիոնն է: ՀՀԿ երիտասարդական կազմակերպության նախագահ, ԱԺ պատգամավոր Արմեն Աշոտյանի խոսքերով, հայկական թիմը մյուսների համար հանելուկ է, քանի որ չգիտեն թիմի մարտավարությունը, ինտելեկտուալ կարողությունները, տրամաբանության գործելակերպը և այլն: «Այնուամենայնիվ, եթե մեր թիմը լավագույն տասնյակում հայտնվի, դա ևս մեծ հաջողություն կարելի է համարել, որովհետև խաղալու են աշխարհի ուժեղագույն գիտակները», - ասաց Ա. Աշոտյանը:

բարձրաձայն ծիծաղելով:

- Տերյան չէ, բայց որ շնորհալի ու տաղանդավոր տղա է, դրանում ես համոզված եմ, - պատասխանեց Ալազանը:

Չարենցը Շիրազին, որպես գրողի, չէր հավանում, սկսնակներից նրան շատ դուր էր գալիս Սուրեն Թարյանը: Չնայած այդ ամենին՝ Ալազանը հավաքեց Շիրազի հին ու նոր բանաստեղծությունները, կազմեց «Գարնանամուտ» խորագրով մի ժողովածու և հենց Չարենցի մոտ էլ, որն այդ ժամանակ Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչն էր, հանձնեց տպագրության: Այսպիսով լույս տեսավ Շիրազի անդրանիկ «Գարնանամուտ» ժողովածուն՝ Ալազանի առաջաբանով:

\*\*\*

1935 թիվն էր: Ալազանն ու ես Ծաղկաձորի գրողների հանգստյան տանն էինք: Ալազանը մի քանի օրով Շիրազին էլ հրավիրեց հանգստանալու: Մի օր Ալազանը շատ լուրջ ու մտախոհ ասաց.

- Այ Մարո, դու չէ՞ս զարմանում, թե այս աղքատիկ գավառաբարբառով խոսող տղան ո՞նց կարող է այդպիսի չքնաղ բանաստեղծությունների ու նամակների հեղինակ լինել: Գիշտն ասած, ես կասկածում եմ և այսօր մի բան եմ որոշել: Նա Շիրազին կանչեց մեր սենյակ, նրան թուղթ ու մատիտ տալով ասաց.

- Շիրազ ջան, ես ու Մարոն զնում ենք ամտառ զբոսնելու, դու լրիվ մենակ կմնաս. դուռն էլ կփակեմ, որ քեզ չխանգարեն: Մինչև մեր գալը դու մի քառատուն բանաստեղծություն գրիր: «Գրական թերթ»-ի այս համարի համար բանաստեղծություն չունեն:

- Լավ, շատ լավ, - ասաց Շիրազը: Ալազանը, սենյակի դուռը փակելով, ասաց.

- Վախենում եմ այսօր Շիրազի տպագրվելու վերջին օրը լինի:

Մի քանի ժամից տուն դարձանք: Տեսանք Շիրազը հուզված, կարմրած, մագերը զգզված, սենյակում զնում ու գալիս էր թղթին ինչ-որ տողեր հանձնելով:

- Հը, Օնիկ ջան, մի բան գրե՞լ ես:

- Առ տես, թե ինչ եմ գրել:

Ո՛վ քեզ զարմանք, նա ոչ թե մի բանաստեղծություն, այլ մի ամբողջ պոեմ էր գրել «Արևի երկիր» խորագրով: Այն ընթերցելուց հետո, Ալազանը կարծես կորած եղբորը գտավ, ուրախությամբ ու ցնծությամբ Շիրազի հետ զրկախառնվեց ու ասաց.

- Հիմա Օնիկ ջան, լրիվ համոզվեցի, որ այդ բոլոր բանաստեղծությունների ու նամակների հեղինակը դու ես:

- Յա, որ ես չեմ, բա վո՞վ է, - զարմացած ասաց Շիրազը:

Նրանք նորից զրկախառնվեցին: «Շիրազ ջան, իմ գրկում էլ դու առաջ կգնաս, բոլորովին չնմտածես»:

Այո, իմ աչքի առաջ Ալազանը հայրական հոգատարությամբ ու գուրգուրանքով Շիրազին դուրս հանեց անապատանների շարքից և տեղավորեց հայ գրողների առաջավոր շարքերում, նրան հասցրեց հայ գրականության պատվավոր պատվանդանին:

Խոսքս ավարտեմ Շիրազի խոսքերով, որ մակագրել էր իր գրքի վրա և նվիրել Ալազանին: «Ալազանին՝ ինձ մկրտող ավագանին»:

## Հավելում Հասնիկ Ալազանից

Ամիսներ առաջ մեր ընտանիքի վաղեմի բարեկամ, ծնունդով վանեցի Պատրիկ Սարոյանը ինձ նվիրեց Հովհաննես Շիրազի՝ հայրիկիս՝ Վահրամ Ալազանին նվիրված մի անտիպ բանաստեղծություն՝ զբրված 1945-46 թթ., երբ հայրս զոհվում էր Կոլիմա (մահվան հովիտ) կոչվող ցուրտ ու դաժան պատժավայրում, որտեղ սառնամանիքները հասնում էին 70-72 աստիճան և ցրտահարությունից մահացությունը սովորական բան էր:

Գուցե այդ տարիներին Շիրազն էլ շատերի նման լսել էր, որ Ալազանը վախճանվել է Սիբիրում, և դա է եղել պատճառը, որ այդ բանաստեղծությունը վերնագրել է «Անշիրին Ալազանի շիրիմին»:

Սիրով այս բանաստեղծությունը հանձնում եմ ձեր ուշադրությանը:

## ԱՆՇԻՐԻՍ ԱԼԱԶԱՆԻ ՇԻՐԻՄԻՆ

Ծաղիկներ, բացվեք իմ գերեզմանին,  
Դեռ իմ արցունքը ձեր մեջ կցողա,  
Ծաղիկներ, լացեք իմ գերեզմանին,-  
Կյանքում անծաղիկ ես շատ լաց եղա...  
Վրաս՝ սպիտակ շուշանների տեղ՝  
Չյունն է սպիտակ պատանքս գործում,  
Մինչ ես անպատանք թաղվեցի այստեղ,  
Միակ լացողս ձյունն է այս կոծում:  
Ծաղիկներ, երգեք իմ գերեզմանին  
Մենակությունից սիրտս կդողա,-  
Լուր տարեք հեռու իմ Հայաստանին,  
Դեռ մորս արցունքն այնտեղ կցողա...  
Որտեղի՞ց որտեղ ընկանք, ո՞վ աստված,  
Եվ ո՞վ էր տեսել ձերմակ անապատ,  
Ախ, այս ձերմակը սև է, անաստված,  
Այս ի՞նչ ձերմակ է մեր գլխին բերում,  
Այս սևո՞վ է մեզ հյուսիսն համբուրում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ, 1945-46 թթ.

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

ԼՂ պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանի կուսակցությունը, որի համագումարը նախատեսված է օգոստոսի վերջին, կոչվելու է «Միասնական հայրենիք»: Տևական ժամանակ է արդեն գնում է կուսակցականների ակտիվ հավաքագրում: Սամվել Բաբայանն ամեն ինչ անում է, որ իր կուսակցության մեջ մեծ թիվ կազմեն ինտելիգենցիայի ներկայացուցիչները: Թե ո՞վ կզրվա՞ր իր Վրաստանի հայրենիքը», դեռ որոշված չէ. համենայնդեպս, Սամվել Բաբայանն ինքը չի դառնա կուսակցության նախագահը:

## ԿՎԵՐԱՊԱՏՐԱՏՎԵՆ

### ՍՓՅՈՒՌԱԿԱՅ

### ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԸ

ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ և Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի աջակցությամբ հունիսի 28-ից օգոստոսի 28-ը Հայաստանում կանցկացվեն մոտ 80 սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Ի դեպ, նմանատիպ դասընթացներն իրականացվում են 2000 թվականից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվերով: Դասընթացներն ընթանալու են նախադպրոցական, տարրական, միջին և ավագ դպրոցի ուսուցիչների շրջանում: Նրանք կանցնեն նաև առարկայական վերապատրաստություն, քանի որ սփյուռքահայ ուսուցիչների մեծ մասը աշխատում է Հայաստանից ուղարկված դասագրքերով: Վերապատրաստման դասընթացներն իրականացվելու համար պետք ունի չորս հատկացվել է 600 հազար դրամ: Իսկ ուսուցիչների կեցության ծախսերն առաջին անգամ հոգալու է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Դասընթացների հետ կապված միջոցառումների բացումը տեղի կունենա Վեհարանում՝ հունիսի 28-ին:

# «ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԵՆԵՉԵՐԸ»

Վերջերս մոսկովյան «ՌՈՍԻԱ» հեռուստաալիքը եթեր հեռարձակեց ուշագրավ մի հաղորդում՝ նվիրված Անաստաս Միկոյանին: 20-րդ դարի առաջին քառորդի աշխարհացունց իրադարձությունների հորձանուտում հայտնված Անաստաս Միկոյանն իր կյանքը կապեց Լենինի ստեղծած տոտալ համակարգի հետ: Ինչպես մեր ժամանակներում՝ 15 տարի առաջ, այնպես էլ 1917 թ., հասարակական կացութաձևի 180 աստիճան փոփոխությունը բերեց ողբերգական իրադարձություններ, որոնց ընթացքում միլիոնավոր շարքային մարդկանց ողբերգական ճակատագիրը բաժանեցին նույն հեղափոխություն իրականացնողներն ու նվիրյալները: Նոր իշխանության համար կատաղի պայքարում խորտակվեցին խոշոր անհատականություններ Լեո Բրոնշտեյն Տրոցկին, Կամենն Թեդեյեֆելդը, Ջինովկը, Ձերժինսկին, Ֆրունզեն, Կիրովը, Օրջոնիկիձեն, Տոլստալսկին, Մալենկովը, Մոլոտովը, Կազանովիչը, Խրուշչովը և շատ ուրիշներ: Տասնամյակներ տևած այդ պայքարում կանգուն մնաց մեկ մարդ՝ Անաստաս Միկոյանը: Հետադարձ հայացք նետելով այդ մարդու անցած ճանապարհին և գործունեությանը, զարմանալ, ինչու չէ, նաև հիանալ կարելի է նրա ինտելեկտով, ճկուն մտքով, սթափ կշռադատելու կարողությամբ: Պատահական չէ, որ ռուս պատմաբանը նրան համարում է 20-րդ դարի լավագույն դիվանագետներից մեկը, համեմատելով այնպիսի գիգանտների հետ, ինչպիսիք էին Թալեյրանն ու Մետերնիխը:



զից էր կախված: Հետագայում որոշ մարդիկ մեղադրեցին Միկոյանին 1937 թ. Հայաստանում «գտուններին» մասնակից լինելու համար: Ինչ խոսք, այսպիսի մեղադրանքը զուտ էնդոցինալ մոտեցումների հետևանք էր: Նա Հայաստան էր եկել Գեորգի Մալենկովի հետ, որ այդ օրերին դեռ Կենտկոմի անդամ էլ չէր և իր մորն էլ չէր խնայի Ստալինի վստահությունը շահելու համար: Ժամանակները դավադիր էին, յուրաքանչյուրը հսկում էր կողքի կանգնածին: Միկոյանը ոչ մի հնարավորություն չուներ օգնելու հայրենակիցներին: Ավելին, Երևանում դեռ չէր սկսել առաջին միստը, երբ դուռը բացվեց և ներս մտավ Թիֆլիսից ժամանած Բերիան՝ ասես Միկոյանի վրա կրկնակի հսկողություն սահմանելու միտումով:

Այնուհանդերձ Մոսկվայում Միկոյանը կարողացավ օգնության ձեռք մեկնել գնդապետ Հովհաննես Բաղդամյանին, որ 1937 թ. սովորում էր գլխավոր շտաբի կանդեմիայում: Այս հաստատությունում ևս մոլեգնում էր «հեղափոխական գերզոգությունը», խրախուսվում մատնությունը: Բաղդամյանին մեղադրում էին դաշնակցության բանակում ծառայելու մեջ: Ապագա մարշալին բարեկամները խորհուրդ տվեցին իրմեջ Միկոյանին: Վերջինս կարողացավ իր հայրենակցի գլխից հեռացնել Դանոկյան սուրը:

Առավել մեծ է Միկոյանի ծառայությունը Հայրենական պատերազմի տարիներին: Հսկայածավալ աշխատանքը, որ օր ու գիշեր չէր դադարում Միկոյանի համար, կապված էր բանակի բոլոր տեսակի մատակարարումների, էվակուացիոն խընդիրների հետ: Պատահական չէր, որ դեռ 1943 թ. Միկոյանն արժանացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Պատերազմից հետո Միկոյանը մնաց որպես Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ և արտաքին առևտրի մինիստր:

1949-52 թթ. տեղորի մոր բորբոքման տարիներին Ստալինն արդեն հագվադեպ էր հրավիրում Միկոյանին: Նրան այլևս չէր հրավիրում մոսկովյան քաղաքային միստերին: Միկոյանը գրում է. «...նրա դժգոհությունը Մոլոտովից և ինձնից, որքան հասկանում եմ, վաղուց էր հասունացել...

հանձինս մեզ նա տեսնում էր իր մութ գործերի վկաներին... նրա՝ տարիների հետ սրվող հիվանդ կասկածամտության պարագայում մենք պետք է վերանայինք»:

Ստալինի մահից հետո Անաստաս Միկոյանը նորից իր ակտիվ քաղաքական ու տնտեսական գործունեության բարձրակետում էր: Կոմկուսի XX համագումարում Միկոյանը կրթոտ ելույթ ունեցավ Ստալինի հասցեին և զարմացրեց բոլորին «կատեգորիկ որոշակիությամբ»: Այդ տարիներին Միկոյանը փայլուն դրսևորեց իր դիվանագիտական ունակությունները: Դա վերաբերում է թե՛ 1956 թ. Լեհաստանում ստեղծված ճգնաժամին, թե՛ հունգարական դեպքերին, ինչի արդյունքում հնարավոր եղավ խուսափել մեծ արյունահեղումներից:

1956 թ. ՍՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու Անաստաս Միկոյանը Երևանի իր ընտրողների ընդհանուր ժողովում ելույթ ունենալով, հատկապես շեշտեց եղիշե Զարեցի ստեղծագործությունները տպագրելու, նրա անունը վերականգնելու անհրաժեշտությունը: Ասվածը ընդունվեց բուռն ծափահարություններով:

Ստալինյան սառույցի կտորվելուց հետո Միկոյանը դիվանագիտական այցելություններ կատարեց Պակիստան, Հնդկաստան, Չինաստան: Անհրաժեշտ էր ճկուն, խելացի քաղաքականություն և ոչ թե կոպիտ թելադրանք: Միկոյանը կարողացավ վերականգնել բարիդրացիական հարաբերությունները Հարավսլավիայի նախագահ Իոսիֆ Բրոզ Տիտոյի հետ, որի հետ սուր կոնֆլիկտի մեջ էր Ստալինը: 1959 թ. Միկոյանը մեկնեց ԱՄՆ՝ բացելու ՍՍՀՄ ցուցահանդեսը և նախապատրաստելու Խրուշչովի այցը: Միկոյանը փայլուն կատարեց իր առաքելությունը: ԱՄՆ-ի Մամուլի ազգային ակումբը հայտնի էր օտարերկրյա դիվանագետներին և պետական գործիչներին սադրիչ հարցերով ու սուր բանավեճերով նեղը զցելու և քրտնաթոր դուրս հանելու սովորությամբ: Միկոյանի նկատմամբ հակառակը կատարվեց: Միկոյանը զարմացրեց ժուռնալիստներին սուր և հունձրով պատասխաններով: Նույնիսկ Միկոյանին կատակով հարցրին. «Արդյոք նա չի՞ պատրաստվում իր թեկնածությունն առաջադրել սենատում»:

Կուրբայական (Կարիքյան) ճգնաժամի օրերին 1962 թ., երբ աշխարհը կանգնած էր երրորդ համաշխարհային պատերազմի փաստի առաջ, Միկոյանի դիվանագիտական փայլուն գործողությունների շնորհիվ հնարավոր եղավ խուսափել համաշխարհային աղետից: Կուրբայական ճգնաժամի խաղաղ լուծումը «Միկոյանի ամենակարևոր «դերն» էր համաշխարհային դիվանագիտության մեջ»: Այս առիթով 60-ականների ամերիկյան մամուլը Միկոյանին համարեց «մեր ժամանակների հակաճգնաժամային լավագույն մենեջերը»: 1963 թ. Անաստաս Միկոյանի ակտիվ միջամտությամբ Արարատյան դաշտավայրից դուրս մղվեց բանձակի արտադրությունը, որը ծանր բեռ էր մեր գյուղատնտեսության համար: 1964 թ. Միկոյանն ընտրվեց ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության



անխազահ: Սովորաբար այս պաշտոնից էր սկսվում քաղաքային անդամների պաշտոնաթողության գործընթացը: 1965 թ. լրացավ Միկոյանի 70 տարին: Նոյեմբեր ամսին նա անցավ թոշակի:

Անաստաս Միկոյանը հայ ժողովրդի իմաստուն զավակներից է: Նա հայ մարդու ազգանունը արժանապատիվ ներկայացրել է աշխարհին: Թերահավատների համար ասենք, որ անցել են այն ժամանակները, երբ աշխատում էր «ով մեզ հետ

չէ, նա մեր դեմ է» զազանաբար կարգախոսը: Մենք պետք է հասկանանք, որ անհրաժեշտ է արժանին մատուցել հայ ժողովրդի ականավոր զավակներին, անկախ նրանց կուսակցական, քաղաքական և այլ կողմնորոշումներից: Այսօր մենք ամենատարբեր ձևերով և մոտեցումներով պետք է մեծարենք Անաստաս Միկոյանին, Աղասի Խանջյանին, Իվան Թևոսյանին, մարշալ Խուդյակով-Խամփերյանցին և հայ ժողովրդի շատ այլ արժանավոր զավակների:

Եզրափակելով խոսքը Անաստաս Միկոյանի մասին, դիմում ենք Վանաձորի (Մախկին Ղարաքիլիսա, Կիրովական) քաղաքի ղեկավարությանն ու ազգաբնակչությանը՝ հանրաքվե անցկացնել, փոխել «Վանաձոր» անիմաստ անվանումը, քաղաքը վերանվանել «Միկոյան»:

Ռուբեն ԲԱՂԱԼՅԱՆ

# ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՄԻՐՈ ՃԱՄՓՈՐԴԸ

## Նշվեց Սիեր Մկրտչյանի ծննդյան 75-ամյակը

Հուլիսի 4-ը Սիեր Մկրտչյանի ծննդյան օրն էր. լրացավ նրա ծննդյան 75-ամյակը: Հայաստանի թատերական գործիչների միությունում և «Սիեր Մկրտչյան» արտիստական թատրոնում նշվեց այս իրադարձությունը: Առանց պարտադրանքի, առանց հրահանգի նշվեց նաև արտիստի ծննդավայրում՝ Գյումրիում: Գոնե մեկ օրով մենք կրկին հիացանք նրա արվեստով: Ավա՛ղ՝ իր բացակայությամբ, թեև սրբապղծություն է Սիեր Մկրտչյանի նման մարդկանց երբևէ բացակա նշանակելը: Տոնակատարություններին խոսեցին մարդիկ՝ նրա բարեկամները: Եվ սա այն բացառիկ օրերից մեկն էր, այն բացառիկ իրադարձությունը, երբ չարակամներ չեղան: Իր հողեղեն երևույթի ժամանակ բոլոր չարակամները պարտվեցին, թեև նրանցից ոմանք դեռ այսօր էլ իր մասին հուշեր են գրում ու պատմում:



կունենանք Սիեր Մկրտչյանի այս հզոր ողբերգությամբ մեր տանկացած հոգիները վերազարթնեցնելու:

1992 թվականի հունիսի 26-ին, երբ «Հացթուխի կինը» պիեսի բեմադրության փորձերը դեռ չէին ավարտվել, երբ օրուգիշեր աշխատում էր՝ բեմադրությունն ավարտելու համար, սասց. «Այս պիեսը մի քանի անգամ բեմադրել են Լուս Անջելեսում, Սաթամյանի խմբի հետ»: Փորձն ուներ արդեն և ցանկանում էր իր թատրոնում առավել կատարյալ ներկայացնել մի մարդու կերպար, ով անսահման հավատում է և ունի խաբում են, ով սիրում է և ունի խաբում են: Բայց, միևնույն է, նա շարունակում է սիրել:

Բազմաթիվ հիացական կարծիքներ են գրի առել այս բեմադրության ներկայացման և նրա ստեղծած հացթուխ էմաբլի կերպարի մասին: Դրամատուրգ, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի փոխմասնաբար Կարինե Տոդիկյանն անչափ նուրբ դիտարկում ունի. «Սեփական թատրոնում իր հանդիսատեսի առաջ Մկրտչյանը ձեռքազատվեց ամեն ինչից և ամենքից ու եղավ՝ ինչ եղել է ու կա: Նա կարողացավ ողջ ներկայացման ընթացքում իր վրա պահել բոլորի հայացքներն ու մտքերը: Մի ամբողջ ներկայացում, և նա ողջ դահլիճի տերն էր և ստիպում էր իր հետ սիրել, ասել, գծել: Նա բոլորին

ստիպում է հացթուխ դառնալ. մի՞թե դա չէ ամեն մի դերասանի երազանքը: Նրա հազուստը և՛ Ռոմեո է, երբ գիշերված մեջ հնչում է սերենադը, և՛ Պաղտասար է, երբ չի կարողանում հարմարվել անկողնում, և՛ Օթելլո է, թեև չի խեղդում, բայց սպանում է սիրած կնոջ դավաճանությունը կատվին մեկնած կաթի ափսեով: Իսկ երբ նրա հացթուխը քնի մեջ բռնում է հովվի հետ փախչել պատրաստվող Օրելիի փեշը, դու հավատում ես, որ այդ, Մկրտչյանի հերոսը ոչ միայն կարող էր, այլև պետք է այդպես վարվեր, որովհետև դա դերասանի այն խենթությունն է, որը սովորականը դարձնում է իրաջ: Իսկ ընդմիջմանը կողքը նստած անծանոթ կինն իր ընկերուհուն խոստովանեց. «Երբ նա բռնեց կնոջ փեշը, ես սարսափած վեր թռա, թվաց իմ փեշից է բռնել: Ես եմ փախչողը»: Ու ես հասկացա, որ միայն ես չէի Օրելիի դերում, այդ երեկո շատ-շատերին հացթուխը գերել-դարձրել էր իր Օրելին...»:

Այդ, Սիեր Մկրտչյանի էմաբլը հազվագյուտ նվաճում է եղել մեր թատրոնի համար: Անգամ անվերջ ռացիոնալացվող մեր ժամանակներում Մկրտչյանի ստեղծած այս կերպարը հոգևոր հզոր լիցք է հաղորդում մարդուն: Ինչպես նաև՝ նրա Սիրանո դը Բերժերակը, Պաղտասար աղբարը, Բարոնը, ինչպես... նրա շատ ու շատ կերպարներ:

Նա կիսատ բաներ չէր սիրում, չէր կարող լինել կիսատոնի վրա: Նա անվերջ վառվում էր և վառվում էր ամբողջությամբ: Ինչպես եղավ կյանքում:

Տազնապ ուներ մեջը, տազնապ մեր բոլորի համար. «Սերը պակասել է, - սասց մի օր, - սերը չկա: Ատելությամբ ինչ-որ բան կարող ես անել, գուցե շատ բան, բայց այնպիսի բան չկա, որ սերը չանի»:

Այս օրերին մենք նորից զգացինք Սիեր Մկրտչյանի սերը:

Սերգեյ ԳԱԼՈՅԱՆ

## ԱՂՔԱՏ ՄԻԼԻՈՆԱՏԵՐԵՐԸ

Ավստրալացի միլիոնատերերի միայն 5 տոկոսն է իրեն հարուստ մարդ համարում: «Ավստրալիայի ինստիտուտ» հետազոտական կազմակերպության 12 հազար մարդկանց շրջանում անցկացրած հարցումը ցույց է տվել, որ այն ընտանիքների 7 տոկոսը, որոնք ունեն երեք միլիոն ավստրալական դոլարի (ավելի քան 2,2 միլիոն ԱՄՆ դոլար) տարեկան եկամուտ, իրենց համարում են կամ «աղքատ», կամ «հազիվ ծայրը ծայրին հասցնող»: «Կանաչ մայր ցամաքի» 20 տոկոս կազմող առավել հարուստ բնակիչների գրեթե կեսն այն կարծիքն է, որ չի կարող իրեն թույլ տալ այն, ինչի կարիքն իրոք ունի, նշված է հետազոտության արդյունքների մասին նյութում, որը գեներված է հիշյալ ինստիտուտի Ինտերնետ կայքում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

# ՄԻՐԱՆՈ ԴԸ ԲԵՐԺԸՐԱԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ



Ռուս փիլիսոփա Ռոզանովը գրել է. «Երկու հրեշտակ են նստած ուսերիս՝ ծիծաղի հրեշտակն ու արցունքների հրեշտակը: Նրանց մշտական բանակրիվը իմ կյանքն է»:

Յրեշտակների այդ բանակրիվը Միեր Մկրտչյանի թե՛ կյանքն էր, թե՛ արվեստը: Նա Պիեռնոն էր՝ Առլեքիցի հանդերձանքով: Տրուբադուր էր՝ սատիրի գլխով:

Կատակերգու, որ ողբերգակի ինքնազգացողություն ուներ, ինչպես շեքսպիրյան խեղկատակը:

Ծիծաղի աստված Կոմուսը այդ Ռոմեոյի դեմքին դրոշմել էր իր դիմակը:

Նա Դոն Կիխոտն էր ու Սանչո Պանսան՝ մի անձի մեջ:

Ֆելլինիի նկարագրած Տոտոյի նման քեզ էր հառուն իր «հեզ աչքերը՝ մեծ ծիծեռնակի, ոգեհարցունկի, հարյուրամյա մանկան, խելացնոր հրեշտակի աչքեր»:

Օբսյունորոնների այս շարանը կարելի է երկար շարունակել, բայց դրանք միայն կհավաստեն Միեր Մկրտչյան արտիստի անորսալի էությունը:

Ամենաճշգրիտ բանաձևումներն անգամ այնքան խղճուկ են թվում այդ անորսալի - անբացատրելի մեկնելու համար, որ թերեզ են անգոր տարածում: Դա անգորու-

թյան այն ծայրակետն է, ուր «աբսուրդի արքա» էժեն Իոնեսկոն «Աթոռները» տրագիֆարսում զետեղում է իր Հռետորին: Նա պարզապես համար է: Ուրեմն՝ նույնքան անկարող, որքան թռչունները Կուրտ Վոնեգութի «Սպանդանոց համար հինգ»-ում, որովհետև «թռչուններն ի՞նչ կարող են ասել»: «ընդամենը ինչ-որ պի-ծի-ֆիծ», թե՛ սրա նման անհողաբաշխ մի բան իրենց թռչնային լեզվով:

Արժե՞ ծտային անճարակությամբ այսպես «պի-ծի-ֆիծ» ճշվողելու համար պրպտել հրաշքի մեխանիկան՝ ձգտելով ճեղքել անբացատրելիի խեցին:

Միեր Մկրտչյանը վերջինս էր մեծ արտիստների զարմից և զնաց Սիրանո դը Բերժրակի պես՝ իր գաղտնիքը տանելով իր հետ: Եթե մնար՝ հիմա 75 տարեկան կլիներ:

Նրա վերջին դերը Սարսել Պանյոլի «Հացագործին կինը» պիեսում, իր բոլոր խաղացած ու չխաղացած դերերի հանրագումարն էր, նրա չիմացված - չիրացված - չպարպված մեծության վերջին հավաստիքը:

## «ԼԵՆԻՆԱԿԱՆՅԻ ՏՂԵՆ»



1953թ. սովորում էի երևանի գեղարվեստաբանական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի 2-րդ կուրսում: Այդ տարի մեր կուրսը համալրվեց երեք նոր ուսանողով: Երկուսը չնաշխարհիկ աղջիկներ էին. Լեյլի Խաչատրյանը՝ Արամ Խաչատրյանի զարմուհին և Ասյա Սուջյանը, երրորդը 23-ամյա Ֆրունզիկ Մկրտչյանն էր, որին անմիջապես կնքեցինք «Լենինականցի տղեն» մականունով: Տարիքից մեծ էր երևում, չափազանց միհար էր, գունատ, բայց աներևակայելի դյուրաշարժ ու ճկուն: Անմիջապես տպավորվեցին նրա բարի և զարմանալիորեն տխուր աչքերը, բերանի կողքից իջնող կնճիռները յուրօրինակ իմաստություն էին տալիս դեմքին, բայց դեմքի գլխավոր հերոսը, եթե կարելի է այդպես ասել, քիթն էր՝ հզոր ու անկրկնելի: Անմիջապես դարձավ կուրսի կուռքը, խորհրդանիշը, իր բացառիկ տաղանդով, անմիջականությամբ՝ նաև ուսանողական ներկայացումների ոգին: Լավ էր սովորում, ոչ մի գնով էր ուզում հաս-

կանալ, թե դերասանի ինչին են պետք մարքսիզմ-լենինիզմն ու քաղաքատնտեսությունը: Այդ դասաժամերին սիրում էր սրամտել, անեկդոտներ պատմել, զանազան օյինբազուկություններ անել: Համոզված էր, որ մեծ դերասան դառնալու համար աշխատանքն է գլխավորը՝ ամենօրյա, ամենժամյա համառ աշխատանքը: Պաշտում էր կուրսի ղեկավար Վաղարշ Վաղարշյանին, բայց կուռքը Վահրամ Փափազյանն էր: Վարպետորեն հատվածներ էր արտասանում «Օթելլոյից», «Լիր արքայից», «Դիմակահանդեսից»: Կուրսում են համարվում էի լավագույն կատակերգակը: Տարիներ կանցնեն, և Լենինականցի տղեն ինձ կասի. «Դու բնածին կատակերգակ էիր, Կիլեն, բայց են ուրախ են ու երախտապարտ, որ ասպարեզն ինձ զիջեցիր»: Ուսանողական ներկայացումներում միշտ հանդես էինք գալիս որպես փոխարինողներ, են առաջին կազմում էի, Ֆրունզիկը՝ երկրորդ: Պատճառն այն էր, որ չափազանց դժվարությամբ էր տեքստն անգիր անում: Թեպետ դա չէր խանգարում, որ ներկայացումները վերածի թատերական տոնի: Տեքստը ամբողջությամբ չմտապահելով, չիմանալով միզանսցենը՝ նա հանպատրաստից այնպիսի հնարքների էր դիմում, որ մնում էինք ապշած: Հենց ներկայացման ընթացքում միզանսցեններ էր ստեղծում, խոսքեր հորինում՝ կերպարը հարստացնելով նոր շտրիխներով:

Ուսանողական տարիներին ծնված մեր մտերմությունը շարունակվեց հետագա-

յում: Ես հրապուրվեցի ռեժիսուրայով և մինչև օրս ինձ կշտամբում են, որ Ֆրունզիկին չհրավիրեցի նկարահանվելու իմ ֆիլմերից որևէ մեկում: Մտածում են ու չեն կարողանում որևէ պատճառ գտնել կամ որևէ արդարացում: Ֆրունզիկը մեզ հետ ավարտեց ինստիտուտը, սակայն դիպլոմը ստացավ շատ ավելի ուշ, երբ արդեն ժողովրդական արտիստի բարձր կոչմանն էր արժանացել (ժամանակին չէր հանձնել մարքսիզմ-լենինիզմի պետական քննությունը): 1991թ. մեկնում էի Մոսկվա, որտեղ ընտանիքս էր: Մեկնելուց առաջ այցելեցի Ֆրունզիկին:

- Գնում են էլի, - տխրամած ասաց նա:
- Ընտանիքիս գիրկը, - ասացի ես:
- Պարզ է, կինդ ռուս է, կանչում-տանում է:
- Հիշո՞ւմ են՝ ինչ էր ասում Վաղարշ Վաղարշյանը, - ասացի ես: - Մարդը երջանիկ է, երբ ճիշտ ընտրություն է կատարում մասնագիտության և ամուսնության հարցում:
- Էդ հարցում իմ բախտը չբերեց: Փառքը կա, բայց ընտանեկան ջերմությունը պակասում է, - ասաց ու անսպասելի երգեց «Սարեր, կաղաչեն»-ը:

Այդպես էլ հրաժեշտ տվեցի Ֆրունզիկին, որն արդեն Սովետական Միության ժողովրդական արտիստ էր, սիրված ու հարգված դերասան, իսկ ինձ համար շարունակում էր մնալ ուսանողական տարիների մտերմ ընկերը, նույն այն օրերի Լենինականցի տղեն:

**Վիլեն ԶԱԲՍՐՅԱՆ,**  
հանրապետության արվեստի  
վաստակավոր գործիչ, ռեժիսոր

# ԳԱՐՈՒՆ ԷՐ ՉԵԿԱԾ ԱՄԱՌ, ՓՈՒ Լ ԵԿԱՎ ԵՐԿՆԱԿԱՄԱՐ...

Պ. Սեաև

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս կարճաճանաչ տողերում չեն խոսելու Վիգեն Բաբայանի՝ չարաչարանց, բազում կայաններով անցած, բայց այնուամենայնիվ կայացած բանաստեղծի մասին: Այս կարճաճանաչ տողերով ես ուզում եմ իմ հարգանքը մատուցել մի մարդու, որը կարողացավ պատանեկան նրբին թրթռներից, հայրենիքի հանդեպ տածած վիրավոր սիրուց, գայրույթի անեղծ բռնկումներից, հուսահատ տագնապներից ստեղծել իր լուսահորդ «Յայրենանվագ»-ը, որը կարողացավ ձեռքբերել ու ոտքերը կապկպած, աչքերը՝ անթափանց պարիսպներով շրջափակված, բանտային հեծեծանքներից ու հառաչանքներից հյուսել իր «Բանտանվագ»-ը, որը կարողացավ նորատիպ աքսորի տարածքներում, ու անապատի ավազների փոխարեն ասվածի հյութն էր ունկերում բետոնի շունչն ու ավտոմեքենաների երկաթյա վայրույր, ու աստղերը իջեցված էին երկնքից ու մետաղադրամների պես շարված պետական դրոշին, պանդուխտի իր անմարելի կարոտից, տվայտանքներից, հեռավոր իր հայրենիքին հասնելու ու չհասնելու տենչանքից բաղադրել իր «Աքսորանվագ»-ը, որը կարողացավ հայի բերնեբերան սիրով ու երգով լցված ներաշխարհում տեղ բացել նաև աշխարհի մեծերի սիրով ու երգերի համար, այն դարձնել մերը և հայ դպրությանը մատուցել իր «Բազմանվագ»-ը: Եվ վերջապես կարողացավ իրեն վիճակված կյանքի խեղճված ծռնված, խառնիճաղանջից դուրս գալ ողորկ, անկոտրում, բարի ու բարիացական, սիրով ու երկյուղածությամբ լցված դեպի մարդը, աշխարհը, դեպի իր մեծ ու բազմատառապ ժողովուրդը:

Շնորհակալություն Վիգեն Բաբայանին, մարդկային ոգու իր հաղթանակի համար:

*Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ*  
Յուլտեմբեր 2003թ., Երևան

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1965 թվականի ապրիլի 24-ին՝ Հայոց Մեծ եղեռնի հիսուներորդ տարեկիցի օրը, մենք՝ Հայ Երիտասարդաց Միության յոթ ղեկավարներս, կամ ինչպես հետագայում առատածեռն հայ ժողովուրդը որակեց մեզ՝ յոթ հայրենասերներս՝ Խաչատուր Ամիրջանյանը, Խաչիկ Սաֆարյանը, Գրիգոր վարդապետ Եղյանը, Էդուարդ Կակոսյանը, Մերուժան Յովհաննիսյանը, Կարապետ Քիրանիժյանը և ես արդեն տասնվեց ամիս առաջ ձերբակալված էինք:

1962 թվականին ստեղծված ընդհատակյա մեր կազմակերպության առաջնահերթ խնդիրներից էր ցեղասպանության 50-ամյա սև տարեկիցին հիսուն հազարանոց ցույց կազմակերպել մայրաքաղաք Երևանում, որը նպատակ ուներ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել Հայոց Եղեռնի և Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի խնդիրների վրա: Կազմակերպությունը և նրան օգնող մարդիկ եռանդուն աշխատանքներ էին տանում, տարածում թռուցիկ-հայտարարություններ, հողերի պահանջատիրության, ազգային չլուծված բազմաթիվ հարցերի և խնդիրների վերաբերյալ: Յոթիս ձերբակալված լինելը չէր կարող բացասական ներգործություն թողնել ծրագրված ցույցի կայացման վրա: Նախ՝ մեր ստեղծած հսկայական կազմակերպությունից ձերբակալված էինք միայն յոթ ղեկավարներս, և ապա՝ ամբողջ հայ ժողովուրդը, այդ թվում ավագ ու երիտասարդ մտավորականությունը, ուսանողությունը և շարքային բնակչությունը հոգեպես պատրաստ էին դրան:

Հայրենասիրական այդ պոռթկմանը իրենց թանկարժեք լուծումները բոլոր ազնավագարմ հայորդիները, գրեթե առանց բացառության, Հայաստանի կոմունիստ ղեկավար Յակոբ Զարոբյանից սկսյալ մինչև տաժանքի ու աքսորի ճանապարհը նախընտրած հարյուրավոր քաջարի երիտասարդներ: Շուրջ հարյուր հազարանոց ցույցի մասին տեղեկացանք բանտում լեռնական թերթերից մեկում տպագրված հաղորդագրությունից: Խորհրդային Միության պատմության մեջ կատարվել էր անկարելին՝ առաջին խոշորագույն ցույցը: Մեծ էր հպարտությամբ շահված հաղթանակի բերկրանքը: Ցույցից հետո և նրա ազդե-

## ՎԻԳԵՆ ԲԱԲԱՅԱՆ

Կյանքի 65-րդ տարում հեռավոր ու օտար Վաշինգտոնում իր մահկանացուն կնքեց Հայաստանի Գրողների Միության պատվավոր անդամ, բանաստեղծ Վիգեն Բաբայանը՝ ծննդով արցախցի, նա իր կյանքն իմաստավորեց անշահախնդիր նվիրումով հայրենի երկրին ու գրականությանը:

1962թ-ին ստեղծված Հայ Երիտասարդաց Միության ընդհատակյա կազմակերպության ղեկավարներից էր, ովքեր Հայ Երիտասարդաց Միության առաջ խնդիր էին դրել Եղեռնի 50-ամյակի սգո տարեկիցի օրը հիսուն հազարանոց ցույց կազմակերպել Երևանում: Եվ 1965թ. ապրիլի 24-ին ցույցի ելան ոչ թե հիսուն հազար հոգի, այլ գրեթե ողջ Երևանը: Ցուցարարների շարքում էին նաև Հայաստանի շրջաններից, վրաստանից և այլ հանրապետություններից ժամանած հայեր: Հայ ժողովրդի պահանջատիրական այդ աննախադեպ պոռթկումը նախապատրաստող յոթ ղեկավարները, այդ թվում նաև Վիգեն Բաբայանը, տասնվեց ամիս առաջ արդեն ձերբակալված էին: Եվ օրվա կարգախոսներից մեկն էր «Ազատություն յոթ հայրենասերներին» կոչը: Իսկ դատավարության ժամանակ Վ. Բաբայանի արտասանած խոսքը տարածվում էր իբրև պատգամ և ուղեցույց:

Հինգ տարի սիբիրյան ճամբարներում անցկացնելուց հետո վերադարձավ Երևան և գործի անցավ Հեռուստապետկոմում: 1979թ-ին լույս տեսավ արդեն 40-ը բոլորող բանաստեղծի անդրանիկ ժողովածուն՝ «Նվագներ» խորագրով: Իսկ երկու տարի անց, որպես «քաղաքականապես վտանգավոր անձ» Վ. Բաբայանին հարկադրեցին հեռանալ հայրենիքից: Բնակություն հաստատելով Վաշինգտոնում, աշխատեց «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի հայերեն հեռարձակվող հաղորդումների բաժնում: Հայրենասեր բանաստեղծի ձայնը հայրենիք էր հասնում արդեն անդրօվկիանոսյան ռադիոկայանից, բայց ոչ իբրև բանաստեղծի, այլ՝ ռադիոխոսնակի ձայն: Նա երբեք չչլացավ աստվածատուր իր տաղանդով, այլ ներքաշված ու ամաղմունկ շարունակեց ստեղծագործել: Ասես կանխազգալով անխուսափելիի մոտեցումը, լսելով մերձավորների և ընկերների հորդորներին Վ. Բաբայանը վերջապես բանաստեղծական իր հարուստ հունձքը ամբարներից լույս աշխարհի հանեց երեք մեծատիպ հատորներով:

«Հայրենանվագ» (2001թ.), «Բանտանվագ» (2002թ.) և «Բազմանվագ» (2003թ.): Այս վերջինը համաշխարհային պոեզիայից նրա կատարած բարձրարվեստ թարգմանությունների ընտրանին է: Մահից մի քանի ամիս առաջ լույս ընծայեց իր բանաստեղծությունների հատընտիր հատորյակը՝ Սիլվա Կապուտիկյանի «Երկու խոսք» նախաբանով, որն ավարտվում է Վ. Բաբայանին բնորոշող հետևյալ տողերով:

« ... նա կարողացավ իրեն վիճակված կյանքի խեղճված, ծռնված խառնիճաղանջից դուրս գալ ողորկ, անկոտրում, բարի ու բարյացական, սիրով ու երկյուղածությամբ լցված դեպի մարդը, աշխարհը, դեպի իր մեծ ու բազմատառապ ժողովուրդը:

Շնորհակալություն Վիգեն Բաբայանին՝ մարդկային ոգո իր հաղթանակի համար»:

Հենց այդ ոգու արտացոլքն է նրա պոեզիան՝ ամփոփված թեպետ ուշացումով, բայց արդեն հրատարակված և դեռ հրատարակվելիք հատորներում:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ցությամբ ցեղասպանության զոհերի հիշատակին վեր խոյացած Ծիծեռնակաբերդի կոթողը, որ հայոց պահանջատիրությունը նոր հունի մեջ դրեց, դրա աներկմտելի վկայությունն է:

Ընթերցող բարեկամ, բանտարկության տաժանակիր հինգ տարիները գուցե և մեծ ժամանակահատված չէ Հայրենիքի դատին զինվորագրված երիտասարդ հայորդիների համար...

...Մինչևեռ Մորդովիան, սիբիրյան ճամբարների այն տարածքներից է, որի մասին ասում են. անիծված երկիր, որտեղ հսկիչներից բացի ոչինչ չի աճում:

Մնացյալը «Բանտանվագ»-ում:

Վիգեն ԲԱԲԱՅԱՆ

# ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

Ի վերուստ բանաստեղծական շնորհով օժտված, պատանեկան խանդավառ ներաշխարհով, նույնքան խանդավառ երազներով Վիզեն Բաբայանը ոտք դրեց ուսանողական կյանք:

60-ական թվականներին Երևանի Պետական Համալսարանի բազմատիրաժ թերթում լույս տեսնող նրա քնքուշ երգերը ուսանողներն անգիր էին անում ու սպասում, իրենց լեզվով ասած՝ բանասիրականի Բայրոնի գողտրիկ բանաստեղծություններին ու չէին ուշանում դրանք:

Ես երգ եմ գրում քո մասին,  
հոգիդ ուզում եմ քանդակել,  
ուզում եմ հասնել անհասին,  
փախչող մտքերս վանդակել:

կամ

Երբ արթնացա, դեռ արբած էր  
հոգիս քո բույրից  
ու այտերիս վառվռում էր դեռ  
կրակն համբույրիդ...

Սակայն իսկական արվեստագետին չէր տրված ստեղծել միայն գեղեցիկը և ապրել միայն գեղեցիկով: Չնայած դեռ աշակերտական տարիներից «Պիոներ կանչ»-ում ավագները զուշակել էին փայլուն ապագա: 60-ական թվականների համալսարանական կյանքը զգայուն պատանուն մղում է այլ եզերքներ: Անվարան, քանի որ արցախյան հողի ծնունդ պատանու երակների արյան թրթիռը, հոր զրույցները թուրքերի կողմից անարգված և դաժանորեն սպանված պապի և մյուսների մասին, դեռ մանկուց հայոց պատմությանն ու մեծ մշակույթին հաղորդ լինելը, արդեն իսկ, կանխորոշել էին նրա անդարձ նվիրումը հայրենյաց ճակատագրին:

Ներաշխարհում ափեափ ցավն է անանձնական, խոհը, ուրվագծովոր երազներն ու թևավորվող նպատակը: Համալսարանում առաջինը նա խիզախեց կազմակերպելու եղեռնի չորս նահատակներին՝ Սիամանթոյին, Վարուժանին, Ռուբեն Սևակին, Գրիգոր Ջոհրպալին նվիրված երեկո՝ 1962-ին: Երեկոյի մասին հայտարարություններն եղան շշուկով, փսփոսոցներով, շշուջոցով: Եվ լռությունը խախտվեց հրապարակով: Համալսարանի սրահը չկարողացավ տեղավորել բոլոր ցանկացողներին: Օրվա բանախոսն ինքն էր: Նրա խռովահույզ տեսադաշտում դեպի երկինք էր խոյանում 1915 խորագրությամբ հայոց ամենամեծ սև խաչը և խոյանում որպես հանդիմանանք ապրողներին: Եվ նա զգում է և կրում իր մեջ հանդիմանանքի իր բաժինը:

Երկու միլիոն կմախք հռռում եմ վրաս,  
բազկածողերով թմբկահարում եմ:  
Ես՝ խեղկատակս,  
անզոր աստծո հետ պատերազմելու,  
Գնու՛մ եմ, գնու՛մ,  
որ Լուսնի կեռից ելնեմ կախաղան ...

Մտորումը տանում է մեծերից հասած այն մտքին, թե արվեստագետն է իր Հայրենիքի լավագույն զավակը, որ նա էր ամենից ավելի քերմագին սիրում իր Հայրենիքն ու ցավում նրա համար: Եվ կախաղանը չէ, որ պիտի դառնա նվիրվողի գերնպատակը:

Ինձ թվում է հիմա,  
Լուսամփոփս պիտի ահից ճչա,  
Որ այսպես մութ է աշխարհը եղել:  
Ինձ թվում է հիմա,  
Կբացվի փեղկն իմ պատուհանի,  
Եվ Հիսուսը գունատ  
Ստվեր կնետի խոնավ պատին...

Հիսուսի գունատ ստվերն անգամ զորու չէ փրկության: Փրկությունը պիտի գա, երբ նրան կսպասեն բոլորը, երբ այլևս որևէ ուժ զորու չի լինի կանգնեցնելու նրա ընթացքը:

Լսարաններում քիչ էր լինում, գարնան այգի-պուրակներում նույնպես: Ուսանողական ուրախ կյանքը, սիրված բանաստեղծ լինելու խորախորհուրդ ու ցանկալի ճանապարհը, ամեն քայլափոխի ուսանողուհիների սիրառատ շուրթերից ականջին հասնող իր բանաստեղծությունների տողերը և ամենակարող սերը նույնիսկ գեղանձն երիտասարդին չէղեցին նախընտրած ճանապարհից:

Թերթերում պակասեցին կամ գրեթե անհետացան այնքան սպասված բանաստեղծությունները: Եվ վերջապես ուսանողական բազմատիրաժն այդ ինչպե՞ս պիտի համարձակվեր հրապարակելու:

Դողացող ձեռքս պարզեցի մի օր,  
Եվ լույս մուրացի աշխարհի առաջ:

Այնքան խոստումնալից, այնքան տաղանդավոր քնարերգուն ճանապարհը գիջում էր դրամատիկ շիկացումի հասած ազգի կենսագրությանն ու ճակատագրին զինվորագրված երգչին:

Տեսնեմ մի անգամ  
Ինչպես եմ Հայոց գնդերը արի  
Լեռնանում Մասսին:

Տողով ու երգով, տրամադրություններով ու ցավով չէր ավարտվում գործը, այլ դառնում էր հարազատ հոգիների ծավալած մտորում ու որոնում, փնտրտուք ու վճիռ ու նաև՝ ծրագրված նպատակ: 1965թ. ապրիլի 24-ը լույսով կբացվի Հայոց աշխարհի վրա: Հայոց մայրաքաղաքում վեր ձգված 50000 բռունցքներ աշխարհի բիբին կպարզեն ազգի չմեռած հիշողությունը. այսպես էր համախոհ յոթ հայրենասերների վճիռը:

Գերհամարձակ մի որոշում էր սա: Եվ ինքը՝ դեռ որոշումից առաջ էլ, պատրաստ էր համարում իրեն նվիրել այդ սուրբ գործին: Նվիրումն, իրոք, անմնացորդ եղավ: Եվ ամեն ինչ եղավ այնպես, ինչպես վճռվել էր նախօրոք: Եվ նախակարգախոսներին, որոնք բովանդակում էին Հայոց պահանջատիրությունը, ավելացավ նաև մեկը՝

«Ազատել յոթ հայրենասերներին»:

Բոլորին հայտնի էր արդեն 1964 թվականի «Յոթի» գործը: Գրեթե բոլորը գիտեին դատավարության ողջ ընթացքի մասին: Իսկ համալսարանում թևածեց Վիզեն Բաբայանի խոսքն ասված դատարանի դահլիճում, տարածվեց շուրթից-շուրթ բորբոքելով ու ոգևորելով նորանոր հոգիների:

- Ժամանակակից պատմագիտությունը, - ասել էր Վիզեն Բաբայանը ցուցնուճքի իր խոսքում, - խեղաթյուրում և լրիվ չի ներկայացնում հայ ժողովրդի պատմությունը, նրա ապրած ողբերգությունները, դրանց իսկական մեղավորներին: Այսօր այստեղ մենք ենք կանգնած, թե մեկ ուրիշը, միևնույն է, որովհետև ցույց տալ ժողովրդի պատմությունը, պայքարը իր տարածքների համար, իր լեզվի մաքրության համար դա հայ ժողովրդի պատմական ցանկությունն է: Հնչել է Լեռնոնտոլի լեզուն, բայց ինձ համար ավելի զուճեղ է Նարեկացու լեզուն: Եվ ինչ կերպ էլ լինի, իմ պարտքն է պայքարել այդ գաղափարների իրականացման համար:

- Ի՞նչ նպատակ էր հետապնդում ձեր Ղարաբաղ գնալը, - հարցնում է նախագահը:

- Մեզ հայտնի էր, որ ՄԱԿ-ում պետք է քննարկվեր հայկական հարցը, ցանկանում էինք շոշափել այնտեղի հայության տրամադրությունը:

\*\*\*

Փայլում են հինգ հազար աչքեր,  
Հինգ հազար ձեռքեր դեղնում են...

Սա արդեն փշալարերից այն կողմ է, ուր այնքան հարուստ է հողը նաև հայոց աճյուններով: Ո՞վ գիտի այստեղ ծառերն են շատ կտրտվում նրանց կմախքացած ձեռքերով, թե՞ իրենք են ընկնում կտրտված ծառերի պես հարյուրներով, հազարներով: Ահա գույներ, որոնցով հյուսվում է շարունակությունը կենսա-

գրության երիտասարդ բանաստեղծի: Տարիքավորները անկարող են լինում դիմադրել անլուր տառապանքներին, իսկ ջահելները մեկ-երկու տարում կծկվում են, ծերանում:

Անեզր թվացող այդ տարածքների միգամած մթնոլորտից մորթվող ռեքվիեմի թաց հնչյուններն էին կաթկթում ծանր քարի հանգույն:

Տարանք թաղելու ծերուկ Իգորին,  
Ես, իր ընկերը, մի գույգ բանտապահ:  
Փշալարերը տխուր զնգացին...

Ո՞ր փախչելի համատարած այդ մեռելանոցից, ո՞րտեղ գտնել փրկության խարիսխ, միակ ապավենը՝ թթվածնի կենսատու նշխարը, ո՞րտեղ գտնել:

Այս ու՞մ են այսպես թափորերգում,  
չէ որ ինձ համար արևներ կային...

Հինգ երկա՛ր, շղթաների մեջ ապրողի համար ամենաերկար, տարիներին ծնվում են երգեր՝ հարյուրներով, հազարներով: Դրանք մարդկային ներաշխարհի չպեղծված խորխորատներն են, երկրային դժոխքի սև, ահասարսուռ պատկերները: Դանթեական դժոխքը կլանում էր ծիծաղը, հայացքը, մազերը, գույնը, կեցվածքը, ասել է թե ողջ կյանքը: Ամենակարող կացինը մորթում էր ամեն ինչ: Կենդանի պահող գույների միակ ու դարձյալ միակ հույսը, գուրգուրված վերհուշն էլ անմասն չի մնում համատարած սևից:

Ո՞րտեղ փշրեցին լուրթ երազներիս  
սափորը կապույտ,  
Ու՞մ պիտ աղոթեն շոթերս դալուկ  
ու հուզածարավ,  
Այդ ո՞վ էր, ո՞րտեղ  
Այդ ե՞րբ էր, որ  
հավատս մեռավ ու դարձա որբ:

Կհաղթի՞ կյանքն արդյոք, երբ մահն այդքան մոտ է, անգթորեն մոտ, նույնիսկ շոշափելի:

Այս կնճիռները,  
ասես թե մահվան  
դեղին մատներն են՝  
Սահում են ներքև,  
Որ մի մութ գիշեր  
աչքերս փակեն:

Սակայն լույսի և հույսի կարոտը կենարար շունչ են բերում ու ներքին վճիռ:

Լու՛յս կուզեմ, լու՛յս,  
Որ հավատիս երկինքը ողողեն:

Նույն ուժից շարունակվելու են ծնվել զարթոնքի երգեր, իսկ քիչ հետո պիտի երկինքը պեղվի, ուր երեկ գիշեր արև են թաղել...

\*\*\*

Ահա և բաղձալի ազատությունը: Թվում է, հինգ ծանր տարիները մնացին հեռվում: Հայրենիքին նվիրված արվեստագետի սերը ոչ միայն չի մարել, այլև հարստացել է կարոտի գույներով և բոլորովին չի պակասել արև պեղելու գերնպատակը: Իսկ հայրենիքում կային անսահման իրավունքով օժտվածներ, նրանք կարող էին իրեն բաժին ընկած ամեն օրը, ժամը, ամեն վայրկյանը դարձնել թույն ու մաղձ՝ անվերջ, անդադար հետևելով, հետամտելով: Հսկողության տակ էր ամեն խոսք ու շարժում: Եվ «ազատություն» մեջ առավել կշիկանա մորմոքն ուղեղի: Դարձյալ կծամի համլետյան լինել-չլինելու անմարս պատառը, ծերը կիհիջի գանգը ձեռքում բռնած, մարդահարաբերության անվախճան ու անմեկնելի քառուղիներում հարցական նշան դարձած արքայազնին ու կմրմնջա նրա պես:

Մի բրիչ, մի բահ, մի բրիչ, մի բահ,  
Մի կտոր սավան պատանքի համար...

Հետո կզգա, որ այդ երկտողը իր խավարի թարգման չէ ու երկտողը կմեկնի իր հոգու գույներով:

Ո՛չ բրիչ, ո՛չ բահ, ո՛չ բրիչ, ո՛չ բահ,  
Սավան էլ չկա պատանքի համար...

«Ազատության» մեջ է և չկան դատաստան ու մեկուսարան, սիբիրյան ճամբարների միգամած, մեռելամած մթնոլորտ, հիմա «ազատություն» մթնոլորտը սև խավարով, անտեսանելի սեղմ օղակ է ստեղծում շուրջդ և անշարժանում ես ո՛չ միայն դու, այլև նրանք, որոնց կյանքի ես կոչել ինքդ, որոնք արյունն ու ժառանգներն են քո: Անսահման իրավունքով օժտվածները արտաքսում են հայրենիքից, տալով քեզ ապրելու իրավունք և երեխաներիդ համար ավուր հաց հաչթայթելու իրավունք, միայն հեռու օվկիանոսի, հեռու ափերում:

Մինչև հարկադրաբար հեռացումը հայրենի հողից, ստեղծվեցին բանաստեղծական նոր արժեքներ, որոնք հայտնի էին միայն մերձ հարազատներին: Դրանք այլախոհ բանաստեղծ Բաբայանի շուրջը ծանրացող, թանձրացող, սեղմ օղակ դարձնող մթնոլորտից ծնված մենախոսություններն են, որոնք հոգու տառապագին ճեղքվածքն ունեն ու նաև միտումը ազատության մեջ մնալու համար հարկադրված կեցվածքի:

Մենախոսությունների մեջ կա մի ընդհանրացում, որը մեր կարծիքով, ստեղծագործող ոգու փնտրած հաղթանակն է: Դա այն ընդհանրացումն է, որ ցավ զգալով պարտադրված վիճակի համար ստեղծագործողի, պակաս ցավ չի զգում նաև պարտադրողի՝ մերժելի, եղկելի, ծախու կերպարի համար, որի ճանապարհը մինչև մարդն անհունորեն երկար է լինելու: Մենախոսություններից մեկում կարծես նույնամուտ է հերոսը մերժելի կերպարին և իր մեջ առնելով նրան, նրա մեջ եղած եղկելին նույնպես առնում է իր մեջ, ու ձախելով նրան՝ ձախկուն է իրեն, մերժելով նրան՝ մերժում է և իր ապրելը հանդգնություն համարելով, համարում է հանդգնություն նաև ապրելը նրա: Ներկայացված մերժելիի կոնկրետությունից, ընթերցողի հայացքը սևեռվում է ընդհանրականի վրա, որը հոգսն է եղել բոլոր ժամանակների: Հետխոյացքը տանում է դեպի միջնադարի հսկայի մեծ ողբերգությունը, որը ողբերգությունն է նաև այսօրվա ապրող, ստեղծագործող բոլոր ազնիվ հոգիների: Աստվածատուր շնորհով օժտված այդ հոգիների ցավը կատարելության չհասած մարդու մերժելի նկարագրի համար հառնում է և մեզ՝ ընթերցողներիս:

Մենախոսություններում լուսապայծառ հայացք կա ուղղված գալիքին, ուր կան **հրեշտակատեսիլ մանուկներ** հույսի ու լույսի համար պատերազմող: Մենախոսություններում աստվածային աղոթքի հնագույն տողեր կան, ու կարծեք պոկվել են 10-րդ դարի մեծ աղոթողի շշունջից:

Թող ներվի մեղքը ձեր, զի հանդգնեցիք  
արարյալը վերստին արարել...

\*\*\*

Ու՞ր մնաց կյանքի ունայնությունը ծածկող աստվածատուր քողը: Մնաց հեռու հայրենիքի մշուշների մե՞ջ, թե՛ վաշինգտոնյան անհարազատ ու խեղդող խճանկարի կենտրոնում դեգերող տիգրամակերտցի կոշկակար Բադդոն օգնեց, որ **լուսահեղ երագի ակնառու ծառին** բազմի ունայնության գաղափարը: Գուցե **վաշինգտոնյան երկինք խոյացած տաճարի աստիճաններից ձգվող ու աշխարհին պարզվող հազարամյա մուրացիկների դարավոր սպասումից չորացած անհաշիվ, անթիվ ձեռքերը** պոկեցին աստվածատուր քողը...

Թերթում ես ամերիկյան նվագների շարքը և տնքում է մեջդ բոլորիս հարազատ ցավը, բոլորիս հարազատ տողերով:

Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,  
Ձեր անդունդներով եկեք չափվեցեք,  
Դուք է՞լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,  
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր:

Թերևս տիպական է գրական այս կարգի ճանապարհն ու ճակատագիրը պատմականորեն վտանգված փոքր ժողովուրդների նվիրյալ զավակներին անկախ ժամանակակից ու բերած վաստակից:

Շարունակում ենք թերթել բանաստեղծ Վ. Բաբայանի ամերիկ-

յան նվազները, ուր հուսակործան մարդկություն կա նաև առօրեական սադրանքներ, վնասազուրկ լուսայգ ու մարդկային անհմաստ ճիգեր, աշխարհներ հուսաստան ու զագրամած, որտեղ տանջանքները հազարամյա են, ստվերները՝ հալածական: Սակայն մարդկային կարճ կյանքում ստացած այնքան ծանր հարվածների տնքոցները խլանում են հեռվում ծնված բանաստեղծություններից հառնող կարոտի ու աղոթքի լուսավոր շաղախում: Այս տողերից հառնող կարոտը հայրենի բույրով ծաղկադաշտեր չի փռի բանաստեղծի երագների մեջ, շաղախված հայրենի արևոտ արշալույսներով ու աստղածուկ երեկոներով, այդ կարոտը հայրենի հացի ու ջրի հեքիաթը նվազի պես չի մրմնջա գիշեր ու գոր: Ուրիշ է այս տողերից հառնող կարոտը, այն գնում հասնում է **Արիաստանի յոթ հազար տարվա անառիկ անդաստաններն ու պղնձակոփ դարպասները, գուրգակիր տորք-անգեղներն ու հսկա դյուցազունները, հասնում Հայկ հորից ժառանգած եռաժանիին, որ անգործության է մատնված՝ քանգի ապրում է ոսոխն ու կողն էլ առողջ: Կարոտը հասնում է այնտեղ, ուր Թուր Կեծակին է ու Քուռ-կիկ Ջալալին, որոնք սպասում են դեռ Ծուռ Դավթին:**

Կարոտն աղոթք ունի, մոլորակի հեռաստանները նետված աղոթքավոր-ճգնավորի հյուսած աղոթք առ երկիրն իր կորուսյալ, առ ժողովուրդն իր հայրենյաց: Աղոթքում լույս է, բարություն, անեզր հավատ՝ անպաճույճ, անզարդ, հզոր հավատ:

Ու կհավատանք մենք էլ նրա հավատին, երբ կդառնա ու կասի ինքն իրեն ու նաև մեզ, կասի հայրենյաց խոշտանգված զինվորի իրավունքով.

Ունեցած չունեցածդ ետ բեր,  
 ինչ կուզես արա, միայն թե ետ բեր,  
 Կուզես ոռնա անկարելից տիեզերքում,  
 Կուզես մոլորակն ատիվ կործանիր.  
 Կուզես կործանիր քեզ,  
 Լուսաստանս ետ բեր.  
 Արևորդիների վերնատուն  
 Անդաստանն ազաթե ետ բեր:



1915

Թուրք լինեմ, թե խաբեմ...  
Շեքսուի

Երկու միլիոն կմախք հռեռում են վրաս,  
 բազկածողներով թմբկահարում են:  
 Ես՝ խեղկատակս,  
 անգոր Աստծո հետ մենախոսելու,  
 գնում եմ, գնում,  
 որ Լուսնի կեռից ելնեմ կախաղան...

\*\*\*

Արևը կրակ ու պող,  
 մղեղ է փչում կալից,  
 շվաքում մլակ ու բոռ,  
 քուռակի մինջն է գալիս:

Կարապետ էր խաչ-խաչափառ,  
 մոսիմ էր գմույսփողանի,  
 ցաքուտ էր, փուշ-փուշ չափար,  
 չար մարդու աչք թող հանի:

Վառվում էր տուն ու մառան,  
 թափվում էր կրակն հերսի,  
 ի՞նչ տղերք դաշաղ դառան  
 շուն թուրքի սև երեսից...

\*\*\*

Գամփռներն էլ չեն քնում,  
 գայլեր կան գյուղավերին,  
 աղջիկատես էլ չեն գնում,  
 անփեսա գյուղն ավերվի:

Թե կռվից մեկն էլ դարձավ,  
 մի ոտն ու ուսը չկար,  
 արի տես՝ դարձած  
 հարս բերեց ռուս աղջկան:

Սար ու ձոր քար մահարձան,  
 ի՞նչ մնաց լույս Թարթառից,  
 տուն ու տեղ ավեր դարձավ,  
 մոխրացավ թուրք-թաթարից...

\*\*\*

Մի անգամ տեսնեմ  
 ինչպես են հարսիս  
 տանից դուրս հանում  
 զուռնա-դիդուլ:  
 Մի անգամ տեսնեմ  
 ինչպես են հայոց  
 զնդերը արի  
 լեռնանում Մասսին:  
 Մի անգամ տեսնեմ  
 կռվի գնալիս  
 ինչպես կկանչես՝  
 -Հաղթած տուն արի...

\*\*\*

Սենք գավաթով ենք մեր զինին խմել,  
 այն էլ յոթ ցերեկ, յոթ երկար գիշեր,  
 դաշտերում գինու աղբյուր է բխել,  
 ուրախ պահերին գավաթ ենք փշրել:  
 Սենք չէ, պապերս են հսկաներ եղել,  
 այդ նրանք էին գավաթը պարպում,  
 մենք երբ ուզում ենք թախիծը մեղմել  
 նույնիսկ գավաթի տեսքից ենք հարքում...

\*\*\*

Բացված ճանապարհները տունդարձի քսանամյա երագանքը  
 չեն կարող իրագործել: Փոխվել է օրվա գերխըրդիրը, հիմա հարկավոր է հնարավորինը զորավիգ լինել երկրում մնացած հարազատներին, ջանալ, որ հորձանուտը նրանց էլ չքշի հայրենի բնօրրանից:

Իսկ երագանքները, որոնց համար չխնայեցին իրենց կյանքն ինքն ու մյուս նվիրյալները: Երագանքները հիմա պետական-պաշտոնական աստիճաններ են մտնում, փաստաթղթեր դառնում, ծանրակշիռ գործընթաց արձանագրում: Ինչքան էլ քաղաքական մեծ ունակություն, մեծ ճկունություն պահանջող, սակայն այսօր դրանցով զբաղվելը չի վտանգում որևէ մեկի ճակատագիրը: Մնում է բոլորն իմանան, որ այդ մեծ վտանգներից գերծ ճանապարհը հեշտ չի ձեռք բերվել և տրվել է մեծ զոհողությունների ու զոհերի գնով:

Իսկ բանաստեղծությունները: Նրանք բոլորն ի մի են եկել ու հարազատների հորդորով ու նախածեռնությամբ ընթերցողի սեղանին կորվի երեք հատորներ «Նվազարան» ընդհանուր վերնագրով:

Ներկա առաջին հատորը՝ «Հայրենանվագ», գրվել է Երևանում, բանտարկությանն ու աքսորին նախորդած ժամանակահատվածներում:

Երկրորդ հատորը՝ «Բանտանվագ», գրվել է Ռուսաստանում, փշալարերից այն կողմ, բանտարկության հինգ տարիներին:

Երրորդ հատորը՝ «Աքսորանվագ», գրվել է Ամերիկայում, երբ ՊԱԿ-ի ջանքերով նրան հեռացրին Հայրենիքից:

Բանաստեղծության ինքնատիպ կառույցները, լեզվամտածողության դասական հարստությունները հիշեցնող որակը (10-րդ դար), շաղախված բնատուր տաղանդով, հանդգնած ենք, նոր արժեքներ կբերեն մեր գրականությանը, երբ բանաստեղծ Վիգեն Բաբայանի վաստակն ամբողջությամբ կներկայացվի ընթերցող հասարակությանն ու մասնագետների լուրջ վերաբերմունքին:

*Սվետլանա ԽԱՆՈՒՄՅԱՆ,  
 փիլիսոփայական գիտությունների թեկնածու,  
 Վիգեն Բաբայանի հատորյակների խմբագիր*

\*\*\*

Աստղերի թափորն այս գիշեր  
 տանում է դագաղը լուսնի,  
 հազիվ թե երկնի մշուշից  
 այսպիսի ծաղիկ էլ բուսնի:


Հավերժը իր պահն է հիշել,  
 Արևն է խեղդում ծեր հույսին,  
 աստղերի թափորն այս գիշեր  
 տանում է դագաղը լուսնի...

\*\*\*

Ու՞ր մնացին, տեսնես անուրջներս ծավի,  
 ու տենչերիս ոսկե ճոճանակներն անթել,  
 հեքիաթներս անուտ, որ գերծ էին ցավից  
 ու կարոտս շեկմագ, որ հոգիս էր բանտել:  
 Հառաչանքիս ծովում մի նավակ կար անթի,  
 որ սուրում էր հողմի առագաստով անտես,  
 մի բուռ երագանք կար Դարդանելից անդին,  
 մթնշաղից առաջ՝ հարսանեկան հանդես:  
 Հուշկապարիկ մի լույս դեռ փնտրում է թաքում  
 հեռուներում կորած այգեստան ու հանդեր,  
 խելագարված քամին պատուհանս թակում,  
 ծաղկաթերթ է շաղում շիրմաթմբիս անտեր...

\*\*\*

Կգա՞ր, կնստե՞ր էս չեչոտ քարին  
 խռով աշխարհից, մարդուց, Աստղծուց,  
 կգա՞ր, կթիկներ՞ հանգչող արևին:  
 Հեքիաթի տուտը լեռներից էն կողմ  
 դրախտի հովտի դմբերն էր հասնում,  
 ուր Եվան մի օր խաբեց Ադամին:  
 Կգա՞ր, կնստե՞ր և մոռացության



բրոնզե շղարշ կիջներ աշխարհին,  
 թող հորիզոնին արևը հանգչեր:  
 Չիբուխի կրակն արևի նման  
 լուռ կթոցկտար խավարի շուրթին  
 և իմաստնության կայծեր կցրեր:  
 Կգա՛ր, կնստե՛ր...

\*\*\*

Շունս հաջում է մեր լուսնի վրա,  
 տաք թեյն այրում է մատները տատիս,  
 քամին պատռում է տանիք ու վրան  
 ու շոր թռցրնում հարևան բակից:  
 Ծվարել էինք մի մեծ դեզի տակ,  
 առվին կարգելով արթուն պահապան,  
 աչքիս երևաց ծունկդ սպիտակ,  
 ու գյուղում վերջին լույսերը հանգան:  
 Դու հեռում էիր, շուրթերդ կարծես  
 աղոթում էին իրիկնաժամին,  
 այս ուշ գիշերին ինձնից ու՞ր պրծնես,  
 թող լա ու ոռնա դիվահար քամին:  
 Մեր լուսնի վրա թող շունս հաչի  
 ու տաք թեյն այրի մատները տատիս,  
 թող տաքուկ մի սեր մեր գրկում հալչի,  
 մեր բաժինն այս է Աստծո կտակից...

\*\*\*

Ծամ կտրած, չես փոշմանի,  
 էս գիշեր ծոցիկդ առ,  
 էս մթնով, էս ուշ ժամին  
 դրախտիս դուռը գտա:

Ո՞վ տեսնի էս գիշերին,  
 էս ձորով ո՞վ է գալու,  
 հարսանիքիդ ինձ հիշելիս  
 շան աղջիկ, ծո՞վ էս լալու...

\*\*\*

**ՆԱՆԵՍԻ**  
 18-12-73

*Սուրբ Ծննդյան տոնի  
 սեղանները բացեք...*

Շնորհավոր լինի, շեն-շնորթով լինի,  
 Տե՛ր իմ, լուսեղ արա արարումը նրա,  
 առք ու փառքով օծիր երազանքը իմ հին,  
 թող ճառագայթ ցոլա այս հայտնության վրա:

Ու թե մի օր հանկարծ երանությանը վերին  
 փառավորվի հոգիս գոյությունս հաստատ,

Տե՛ր իմ, որդվոց որդի կդառնամ քո գերին,  
 շնորհակալ հյուլեդ, Յվերժություն-Աստված...

\*\*\*

Նանե՛, լուս իմ կեզ, կարոտանք անբառ,  
 անծիր ուղերթիս հուսո հանգրվան,  
 ի՞նչ հիմն արարեմ, որ հնչյունն անմար  
 հրեշտակ դառնա հայացքիդ վրա:  
 Որ երազներդ հագնեն ծիրանի,  
 ոսկերիզ շուքով ծփան աշխարհում,  
 որ վեհ դիցուհիք քեզ տան երանի  
 ու կարոտ մնան ծայնիդ անմարուն:  
 Խորանի լույս իմ, անհաս դիցուհիս,  
 աղոթանվեր խոկումն այս եռուն  
 միակ օժիտն է հրայր տարերքիս:  
 Թող որ լուսարար քո շշուկներում  
 լուռ պատսպարվի տրոփը երգիս  
 ու քո հայացքից աղերսի ներում...

\*\*\*

Դեքիաթ, հեքիաթ, պա՛պս էր,  
 ռաշխա քուռակ տա՛կս էր,  
 Աստված չաներ, որ Նանիս  
 հացը տաշտում պակասեր:

Չամիչ էր, մի բուռ չոր չիր,  
 ավելուկ՝ հարսի ծամեր,  
 փառքդ շատ, Տե՛ր երկնավոր,  
 ի՞նչ կանեն դարդ ու ցավեր:

Դեքիաթ, հեքիաթ, պա՛պս էր,  
 ռաշխա քուռակ տա՛կս էր,  
 Աստված, ինչու՞ թողեցիր  
 Նանս մեզնից պակասեր...

\*\*\*

Օրը բարով բացվի, թոնրի լավաշ հացով,  
 խտղտանքով շողի ու աքլորի կանչով,  
 թող կարոտած աչքը լցվի ուրախ լացով,  
 ու գոյաստանն օժվի լուսնալույսով հանգչող:  
 Գարսանքատան շենին զարկեն դափ ու թմբուկ,  
 պակկում են այսօր Սերն ու Դույսը ջահել,  
 խրախճանքի թափից տիեզերքն է թնդում,  
 ու աստղերը երկնի՝ հավատամքի ջահեր:  
 Թող աշխարհը հեղվի երգով ու շուրջպարով,  
 թող մեկնըմիշտ չքվեն պատնեշներ ու արգելք,  
 չմռռանաք անշուշտ, ինձ էլ հիշեք բարով,  
 այս աշխարհի քեֆին ինձ թանադա կարգեք...

\*\*\*

Կարմրաներկ շքերթ,  
 կարմիր դրոշներ,  
 ցուցատախտակներ  
 բոսորակարմիր,  
 կարմիր զգեստներ,  
 ժպիտներ կարմիր,  
 կարմիր փողոցներ,  
 բազմամբոխ կարմիր,  
 բորբ կարմիր հույսեր,  
 բորբ կարմիր լույսեր,  
 բորբ կարմիր երգով,  
 բորբ կարմիր կրթով:  
 Թափո՛ր, թափորե՛րզ,  
 կարմրաթափորե՛րզ:  
 Տարան թաղելու  
 ա-զա-տու-թյու-նը...

\*\*\*

Լու՛յս կուզեմ, լու՛յս,  
 որ հավատքիս երկինքը ողողեմ,  
 որ օժեն սրբությանը ծյունաթույր:  
 Լու՛յս կուզեմ, լու՛յս, կանթեղս ցողելու,  
 որ հույսիս թանձրամած կատարին  
 փրկության երկինքը տեսնեմ:

Լու՛յս կուզեմ, լու՛յս,  
 փոշեկուլ կուպերս լվալու,  
 որ փնտրեմ ճանփան ամպահույս:  
 Լու՛յս կուզեմ միայն, լու՛յս կուզեմ, լու՛յս...

\*\*\*

Ես դեռ կամ, ապրում եմ անտրտունը, անեն տեղ  
 թողել եմ մի հյուլե, մի կաթիլ,  
 երկնքում, շշուկում, հայացքում ձեր անմեղ  
 շնչում եմ անժպտուն, ես դեռ կամ:  
 Ո՞վ գիտե, մի անկյուն, մոռացված աշխարհից  
 սնվում է երազիս առվակով,  
 ես դեռ կամ, ապրում եմ սրտերում ձեր բարի  
 և հսկում ձեզ հեռվից տազնապով:  
 Եվ մի օր, երբ լռեն երգերը ամենուր,  
 սրինգից իմ երգը կծորա,  
 կապտազոծ երկինքը, արևը հրահուր  
 կտեղան օրհնանքներ ինձ վրա:  
 Կկանչեն ոգիներն անշշուկ ու թեթև,  
 մեղեդից կծորա գիշերով,  
 դեռ կապրեն, լսու՞ն եք, երգերն իմ հոգեթով,  
 թե մեռնեն, կմեռնեն հիշելով...

# ՀՐԱԺԵՇՏԻ ՓՈԽԱՐԵՆ

...Լավ ու վատ, լույս ու մութ, հավատ ու հույս, սեր ու թախիծ, կարոտ, կսկիծ ու ամեն-ամեն բան խառնվեց, տարածությունը չափավորվեց, ժամանակը քարացավ... զույնը՝ տգույն, գեղեցիկը՝ տգեղ, ձևը՝ տձև... ու կածես երկնեց երկին ու երկիր և այդ խառնիճաղանջ, անզույն անորոշության միջից հաղթականորեն, լուսապսակը գլխին, դեպի երկին համնեց՝ աստվածատես, աստվածակերպ, Աստծո նման՝ երկու միլիոն կմախքների հռչոցից խենթացած... նա բարձրացավ երկու միլիոն կմախքների գերեզմանաթունը՝ Արարատ լեռան լուսապսակ գագաթին խաչվելու... այնտեղից է լինելու նրա խոսքն ընդ առ Աստված... այնտեղից է նա, որպես տրուբադուր երկու միլիոն կմախքների ոսկորներից պատրաստված շեփորով հնչեցնելու իր ազգի հավատքն ու ցեղակրոնը՝ Նոյից մինչև Հայկ, Տիգրան, Վարդան, Անդրանիկ ու Նժդեհ... այնտեղ են երկու միլիոն կմախքներ դատավորելու իրենց ազգի Մեծ դատը...

Վիզեն Բաբայանը աշխարհ եկավ բանտարկված, ապրեց բանտարկված ու բանտարկված գնաց աշխարհից... դեպի հավերժություն՝ իր իսկ տենչած ազատությունը... Թերևս միակ մխիթարությունն այն էր, որ նրա կենդանության օրոք՝ ի վերուստ, ներում շնորհվեց նրա բանտարկված պոեզիային և վերջին տարի-

ներին իրար ետևից հրատարակվեցին նրա պոեզիայի հատորակները:

Հայ դասական գրականության և գրականագիտության մեջ՝ ի սկզբանե, Վ. Բաբայանը ուներ իր ուրույն տեղն ու էջը... թերևս ուշացումով, բայց նա հեռանալուց առաջ հասցրեց զբաղեցնել այն: Ամենակարճ ժամանակներում հայ՝ և ոչ միայն, գրականագիտությունը դեռ կուսումնասիրի և կարծեքավորի պոետի գրական ժառանգությունը:

Վիզեն Բաբայան քաղաքական գործչին՝ սովետների կարմիր երկրից արտաքսելուց անմիջապես հետո բանաստեղծ Հրաչյա Սարուխանը այդ առիթով գրեց «Մեր գերեզմաններն արդեն խռով են» բանաստեղծությունը: Այն ժամանակներում ինձ համար անընդունելի էր, քանի որ կար պոետը, իսկ հիմա Հ. Սարուխանը այդ բանաստեղծությամբ դրոշմեց դառն իրականությունը, այնքան անավարտ զրույցներ մնացին, այնքան խոսելու բան կար, որ պահել էի լավ օրերի համար... սակայն «մեր գերեզմաններն արդեն խռով են»...

**Արթուր ԽԱՆՈՒՄՅԱՆ,  
«Արմենարես» թերթի գլխավոր խմբագիր**

## ՄԻ ԹԵ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

**Բարոյական վնասի փոխհատուցման և բոլոր օրենքների մասնագիտական մեկնաբանությունների չգոյության մասին մտահոգված է գործող փաստաբանը**

«Մեր քաղաքացիական օրենսգրքի 99 տոկոսը արտագրված է ՌԴ քաղաքացիական օրենսգրքից, սակայն մեղմ ասած այնքան էլ լավ արտագրված չէ», ասում է Փաստաբանների միջազգային միության անդամ, փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը, քանի որ ՌԴ օրենսգրքում կա բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի վերաբերյալ մեկ ամբողջ գլուխ, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բարոյական վնասի մասին խոսք անգամ չկա: «Այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե հայ ժողովուրդը բարոյականություն չունի, հետևաբար բարոյական վնասի փոխհատուցման մասին խոսելն ավելորդ է: Նույնիսկ վիրավորական է դա», ասում է փաստաբանը: Նա կարծում է, որ հայերը երկրագնդի վրա եղած շատ ժողովուրդներից անհամեմատ բարձր են իրենց բարոյական նկարագրով ու ազգային մեթափիտետով: Այնուամենայնիվ, հայերն իրենց երկրում բարոյական վնասի փոխհատուցման մասին խոսելու համար պետք է նախ ապացուցեն, որ պատճառված բարոյական վնասի հետևանքով իրենց մոտ առաջացել են նյութական ծախսեր, ապա նոր հայցով մտնեն դատարան: Օրինակ, եթե մեկը նյարդային հիվանդություն է ձեռք բերել, նա պետք է ապացույցներ ունենա դեղերի գնման կտրոնների, բժշկական եզրահանգումների և այլնի տեսքով, որ կարողանա ապացուցել իրեն պատճառված վնասը: Այլ խոսքով, պետք է բարոյական վնասի մասին խոսելիս ապացույցներ հավաքել նյութական վնասի տեսքով, ապա նոր մտնել դատարան: Մինչդեռ աշխարհի զարգացած պետությունների քաղաքացիական օրենսգրքերն ու սահմանադրությունները ուղղակիորեն սահմանում են տուժած քաղաքացու կրած բարոյական վնասի չափն ու դրա փոխհատուցումը:

Մարդու իրավունքների գերակայության ձգտող ներկայիս քաղաքակրթությունը հասել է այն գովելի մակարդակին, որ քաղաքացու հոգեկան տանջանքները համարում է բարոյական վնաս, որը օրենքով կարգավորված նորմերով ենթակա է փոխհատուցման: Այս պարագայում անշուշտ կարևորվում են հոգեբանի և այլ վկաների ցուցմունքները: Սակայն, ինչպես ասում են՝ մանավանդ Հայաստանում հավիվ կանչելով բերան չես քաղցրացնի: Ռուզաննա Տեր-Վարդանյանը համոզված է, որ. «Բարոյական վնասի ինստիտուտը պարտադիր պետք է ներդնել մեր օրենս-

դրական համակարգում, մանավանդ եթե մենք Եվրոխորհուրդ մտնելու հավակնություններ ենք ցուցադրում: Եվրոդատարան դիմելու հնարավորություն ունենալով հանդերձ, պարզապես ամոթ է, որ բարոյական վնասի մասին օրենք չունենանք: Եթե արտագրում էին ՌԴ օրենսգրքը, ուրեմն դա էլ արտագրեին. դա ավելի դեմոկրատական կլիներ»:

Ի դեպ, մեկ այլ ուշագրավ ու կարևոր խնդրի է անդրադառնում մեր զրուցակիցը. «ՌԴ-ում գործող օրենքների մեկնաբանությունների երկխոսորդակ կա, որպեսզի յուրաքանչյուր դատավոր հողվածը իր ցանկությամբ չմեկնաբանի և միանման դեպքերին իրար հակասող վճիռներ չտա: Նմանատիպ երևույթներ մեր իրավական պրակտիկայում ևս հաճախ են հանդիպում: Հետաքրքրական է փաստը, որ երբ ՌԴ-ն հրապարակեց իր Քաղաքացիական օրենսգրքը, դրանից անմիջապես հետո հրատարակեց այդ օրենսգրքի մեկնաբանությունները, որը օրենսգրքի կրկնակի ծավալը կազմեց: Սա շատերին քաջ հայտնի բրիտանական իրավաբանության իրեն արդարացրած տարբերակի ներմուծումն է, որով առաջնորդվում է նաև Եվրոդատարանը»:

«Հայաստանյան արդարադատության մեջ օրենքը մեկնաբանելու գործառնություն վերապահված է Դատարանների նախագահների խորհրդին, որի նիստերը գումարվում են ընդամենը երեք ամիսը մեկ: Դատարանների նախագահներն, ինչպես հայտնի է, զբաղված մարդիկ են և նրանց համար էլ ժամանակի առումով շատ բարդ խնդիր է դառնում Քաղաքացիական օրենսգրքի, Քաղաքացիական դատավարական օրենսգրքի և չորս հիմնական օրենսգրքերի հետ աշխատելը», ասում է փաստաբան Ռուզաննա Տեր-Վարդանյանը, որն առաջարկում է հետևյալ տարբերակը: «Օրենքների մեկնաբանությունների ժողովածուն կարող է հեղինակել մեկ մարմին, որը կազմված կլինի իրավաբան գիտնականներից, դատավորներից դատարանների նախագահների խորհրդից: Ցանկալի է այդ մարմինը ստեղծել երկրի գերագույն օրենսդիր մարմնին՝ Աժ-ին կից: Կարծում են միայն այդ դեպքում, ի վերջո, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը կմեկնաբանվի օրենքի ուղղակի և խորքային տրամաբանությամբ»:

**Սուսաննա ՍԱՐԳՍՅԱՆ**



# ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՍԿՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԸ

Օրերս Բեյրութում մեծ հանդիսությամբ նշվեց Հայկազյան համալսարանի 50-ամյակը: Հայ կրթական երևելի օջախը Հայաստանից դուրս հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Հիմնադրվելով 1955-ին և սկզբնական շրջանում կոչվելով Հայկազյան քոլեջ, իր բարձր կրթական մակարդակի, ուսումնական, կազմակերպչական, ստեղծագործական լայն ծիրի գործունեության շնորհիվ 1966 թ. մարտի 25-ին Լիբանանի կրթության նախարարության կողմից ստանում է բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ, իրավունք ձեռք բերում իրականացնելու կրթական ծրագրեր մագիստրոսի աստիճանի համար, իսկ հետագայում կոչվել է Հայկազյան համալսարան:

Ուշագրավ է, որ մինչև 1915 թ. Եղեռնը Փոքր Ասիայում գործում էր 8 քոլեջ: Ցեղասպանությունից, հայերի տեղահանությունից հետո փաստորեն Հայկազյան համալսարանն իր տեսակի մեջ՝ հայրենիքից դուրս գործող միակ կրթական հաստատությունն է: Այսօր Հայկազյան համալսարանի չորս բաժիններում սովորում են շուրջ 800 սաներ, նրանց բոլորն նաև այլազգիներ:

Հիմնադրվելով Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերության (ԱՅԱԸ) և Մերձավոր Արևելքի Հայ ավետարանչական եկեղեցիների միության (ՄԱՅԱԵՄ) կողմից, Հայկազյան համալսարանը որդեգրել է ԱՄՆ-ի կրթության մոդելը: Որպես դասավանդման լեզու կիրառվում է անգլերենը: Արվեստների, գիտության այլազան ճյուղերից գառ, հատուկ ուշադրություն է դարձվում կրոնագիտությանը:

Ինչպես նշվում է Հայկազյան համալսարանի ծրագրերում, քրիստոնեական ժառանգության առաջընթացի համար համալսարանն ապահովում է հոգևոր կյանքի գործունեություն է կունենիկ մթնոլորտում: Կրոնական և փիլիսոփայական բաժինն առաջարկում է դասընթացներ ուսանողներին հնարավորություն տալով արտահայտել իրենց հավատքի համակարգերը:

Համալսարանի արմատները, ինչպես նշում է ծրագիրը, կապված են ոչ միայն եկեղեցու և համայնքի, այլև սեփական ժառանգության հետ: Համալսարանի հայկական կողմնորոշումը դրսևորվում է հայոց լեզվի ուսումնասիրության բաժիններում, որը տալիս է այս առարկայի կրթական աստիճան և կոչված է ապահովելու հայ գրականության, պատմության, քաղաքականության և մշակույթի պատշաճ պրոֆեսիոնալ հիմքեր: Հիշյալ բաժանմունքը նաև սատար է լինում հայկական գրադարանին, իրատարակում է հայերեն ուսումնասիրություններ, կազմակերպում հանրային դասախոսություններ և մշակութային ծեռնարկներ:

Այս տարի Հայկազյան համալսարանի շրջանակարտների հանդիսավոր երեկոն համընկավ բուկի հիմնադրման 50-ամյա հոբելյանի արարողությանը: Այն խոշոր իրադարձություն դարձավ լիբանանյան հոգևոր կյանքի կալվածքում: Հայ համբավաճուն



կրթական օջախի պատերի ներքո հյուրընկալվել էին Հայաստանի և Լիբանանի բարձր պաշտոնյա պետական այրեր, հոգևորականներ, մտավորականներ ի թիվս Լիբանանի Հանրապետության նախագահի ներկայացուցիչ, նախարար Պասսամ Էամիի, խորհրդարանի նախագահի ներկայացուցիչ, երեսփոխան Հակոբ Բագրատունու, վարչապետի ներկայացուցիչ, նախարար Սոհամեդ ժաուատ Խալիֆեի, կրթության նախարարության ներկայացուցիչ Ահմեդ ժամմալի, Լիբանանի հայոց բեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերյանի, Հայ կաթողիկե պատրիարքության ընդհանուր փոխանորդ Վարդան Եպս. Աշգարյանի, Սիջին Արևելքի Հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ վերապատվելի Սկրտիչ Գարայոյանի, նաև երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Սարտիրոսյանի:

Հատուկ հրավերով ներկա էր Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը: Հանդիսավոր արարողության բացմանը հնչած Լիբանանի պետական օրհներգից (Բեյրութի նվազախումբ և «Արմիս» երգչախումբ) Հարութ Ֆազլյանի ղեկավարությամբ, վերապատվելի Նշան Բաքբալյանի կատարած աղոթքից հետո բացման խոսքով հայերեն, արաբերեն, անգլերեն հանդես եկավ Հայկազյան համալսարանի նախագահ, վերապատվելի Փոլ Հայտոսթյանը:

Նշանավորելով Հայկազյան համալսարանի անուրանալի դերն ամբողջ հայ իրականության և մասնավորապես սփյուռքի հայապահպանման հարցում, Փոլ Հայտոսթյանը նշեց. «Կուզենք շնորհակալութիւն յայտնել Հայոց ցեղասպանութենէն վերապրող այն հայերուն, որոնք նահատակ Արմենակ Հայկազեանի յիշատակին կառուցեցին կրթական այս օջախը, որ բարձրագույն ուսում կը ջանքը լիբանանցի երիտասարդներուն, ինչպէս նաև զանազան մշակոյթներու և քաղաքակրթութիւններու երկխօսութեան կերտում կը հանդիսանայ»:

Իր ողջույնի խոսքում երևանի պետական համալսարանի ռեկտոր Ռադիկ Սարտիրոսյանը հիմնավորապես անդրադարձավ Հայկազյան համալսարանի 50-ամյա ազգանպաստ գոյությանը, ուսումնական բարձր պրոֆեսիոնալ նկարագրին:

Բազմալեզուն ղախիճը հատուկ ոգևորությամբ ու ջերմությամբ ունկնդրեց Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Վարդան Օսկանյանի ելույթը, որն առանձնակի էր թե՛ իր իմաստային շեշտադրումներ-

րով, թե՛ մատուցման բարձր հռետորական ծիրով: Մեծապես արժևորելով լիբանանյան հայ գաղութի դերը համայն հայ սփյուռքի հայապահպանման գործընթացում, Վարդան Օսկանյանը հակիրճ ու պատկերավոր ակնարկով անդրադարձավ Սիջին Արևելքի պատմական մի շարք փաստերին, 1967, 1975 թթ. իրադարձություններին: «Այսօր տեսնելով վերանորոգվող, շենացվող Բեյրութը, կայունացման, խաղաղության ճրգտում են տեսնում, լուսավոր ապագա կերտելու միտում», շեշտեց Վ. Օսկանյանը: Անդրադառնալով գլոբալիզացիայի հարցին, արտգործնախարարը նշեց, որ «Համաշխարհայնացման այդ ընթացքը չպիտի բաժանի, անջրպետ ստեղծի հայրենիքի և սփյուռքի միջև, հակառակը՝ ավելի անքակտելի կդարձնի երկուստեք հարաբերությունները»: Առանձնակի նշանակություն տվեց պրո Օսկանյանը երևանի պետական համալսարանի փոխարաբերություններին՝ մաղթելով դրանց առավել գործնական և բազմա-ծիր ընթացք:

Արարողության յուրահատկություններից մեկն այն էր, որ Հայկազյան համալսարանի այս տարվա շրջանավարտներն իրենց վկայականները ստացան արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանից: Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայտոսթյանը Վարդան Օսկանյանին ընծայեց Հայկազյան համալսարանի «Հուշանվեր վահանակը»: Մինչ այդ վահանակը, որպես խորհրդանիշ, Հայկազյանի կողմից ընծայված է եղել Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին և Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրիին:

Հայկազյան համալսարանի 50-ամյա հոբելյանի տոնակալն մթնոլորտը եզրափակեց «Alma Mater Haigazian» բուկին ուղղված ծոնդերով: Եվ ներկայացրեց մեջ դնելու հրճուհուն էին Փոլ Հայտոսթյանի խոսքերը. «Լինելով միակ համալսարանը հայ սփյուռքի մեջ, Հայկազեանը «որը» մը չէ, այլ «կենդանի յուշարձան մը կենանքի աղբիւրին մեջ»:

**Թամար ՀՈՎՀՆՆՆԻՍՅԱՆ, Բեյրութ**

### ՏԵՐ-ՍԱՅԱԿՅԱՆԸ՝ ԲՐՈՆՁԵ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Վանաձորցի Սամվել Տեր-Սահակյանը բրոնզե մեդալ նվաճեց Ֆրանսիայի Բելֆոր քաղաքում ավարտված շախմատի աշխարհի պատմական առաջնությունում: Վերջին փուլերում հայաստանցի մարզիկներից 12 տարեկանների խմբում հանդես եկող եվրոպայի չեմպիոն, վանաձորցի Սամվել Տեր-Սահակյանը ամենամոտոս էր ոսկե մեդալին: Վերջին փուլում հաղթանակ տոնելով, հնդիկ Սրինաթ Նարայանայի, ռուսաստանցի Սաման Սյուզիբովի հետ միասին նա 11 հնարավորից վաստակեց 8,5 միավոր և միայն լրացուցիչ գործակիցներով զիջելով նրանց, գրավեց երրորդ պատվավոր տեղը՝ Հայաստանից բերելով միակ բրոնզե մեդալը: Առաջնությանը տարբեր տարիքային խմբերում մասնակցում էին Հայաստանի 14 մարզիկ-մարզուհիներ:

# ԴԺՎԱՐԻՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## «Յառաջ» օրաթերթի 80-ամյա հոբելյանը

80 տարի գրեթե անընդմեջ (ընդհատվել է միայն Երկրորդ աշխարհամարտի տարիներին) Փարիզի «Յառաջ» օրաթերթն իր մշտական հրապարակումներով կարևոր դեր է կատարել ֆրանսահայ կյանքի իրադարձությունները, քաղաքական, հասարակական, մշակութային կազմակերպությունների գործունեությունը ներկայացնելու ուղղությամբ:



1925 թ. օգոստոսի 1-ին Փարիզում Շավարշ Միսաքյանի հիմնադրմամբ (աջակցությամբ Շավարշ Նարդունու և Հրանտ Սամուելյանի), «Յառաջը» իր գոյությունը նպաստել է հայրենիքի դուրս հայապահպանման կարևորագույն խնդրին: «Յառաջի» հրապարակումներն աչքի են ընկել հետևողականությամբ հանդեպ Հայ դատը, լեզուն և մշակույթը պահպանելու խնդիրները:

Մռաջին տասնամյակներին լինելով ՀՅԴ խոսափողը՝ իր գործելակերպի մեջ նա հաճախ եղել է անկախ և քիչ է տուրք տվել կուսակցական ծայրահեղությունների:

Ազգային-մշակութային ուղղվածությամբ օրաթերթն իր շուրջն է համախմբել ֆրանսահայ մտավորական և գրական մի ողջ սերունդ: Շատերի անդրանիկ ստեղծագործությունները տպագրվել են իրականացվել է «Յառաջի» էջերում (Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի», այստեղ են տպագրվել Նիկողոս Սարաֆյանը, Շավարշ Նարդունին» և այլք): «Յառաջում» տպագրվել են նաև պատմագիտական, գրականագիտական, մշակութաբանական, արվեստաբանական բազմաբնույթ հոդվածներ: Նման հրապարակումները գլխավորապես տեղ են գտել 1976 թ.-ից հրատարակվող օրաթերթի «Միտք և արվեստ» հավելվածում:

Նեց իր դուստրը՝ Արփիկ Միսաքյանը, խիզախ դիրքորոշմամբ, իր նախկին կուսակցությունից անկախ հայացքներով, որ գրեթե միայնակ Արփի Թոթոյանի հետ շարունակում է ղեկավարել ու կազմակերպել քերթի գործունեությունը:

